

372
U-45

1909/10.

ՔԻՍ 0.120-10

Ա-45


ԱՂԷՔՍԵՆԴՐԱՊՈՒԷ

ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ-ՓՐԿԶԻ ՏՂԱՅՈՑ ԴԳՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԵԿԸ ԵՒ
ՏՆՏԵՍՈՎԱՆ

(169.4/1909)

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ,

1908—1909 ուսումն. տարուայ համար.



372
Ա-45

Աղիքանդրապոլ,
Տպարան Յ. Ղառապեանցի.

1909

(35)

08 .02. 2013

50.280

21
2-95



32883-61

Մ Ա Ս Ն Ա.

Սուրբ Փրկչի տղայոց դպրոցի 1908 – 1909 թուի ուսումնական տեղեկագիրը:

ՅԱՐԳԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՆԵՐ,

Հնչեց խորհրդաւոր ժամն և այս հանդիսաւորութեամբ վերջանում է մեր ուսումնական տարին: Մի խումբ պատանի ընթացաւարտներ թողնում են ընդմիջտ այն նուիրական յարկը, որի հովանու ներքոյ տարիներ շարունակ անց են կացրել իրենց պատանեկութեան և ընկերական կեանքի լաւագոյն օրերը: Օրեր, երբ դպրոցիս ուսուցչութիւնն և աշակերտութիւնը ձեռք ձեռքի տուած ընթացել են գործունէութեան միևնոյն ասպարիզում. մէկը՝ իր կոչման համաձայն ուսուցել է, իսկ միւսն՝ իր քաղաքացիական պարտքի և պահանջի գիտակցութեանը հասնելու համար՝ ուսել, ի հարկէ այն չափով, որ չափով մեր դպրոցն իր համեստ ծրագրով տալ կարող էր:

Եւ որովհետեւ կեանքի իւրաքանչիւր մի երևոյթ այն ժամանակ է միայն արժէք ստանում, երբ գործ ու գործունէութիւն և այդ գործն ու գործունէութիւնը գնահատողներ կան, դպրոցիս Մանկավարժական Խորհուրդն էլ, հետեւելով հաշուէտութեան գեղեցիկ սկզբունքին, որով թէ հաշուետեսների և թէ հաշուէտունների խիղճը հանգստանում է, նոցա մէջ եղած որևէ անտեղի կասկած և թիրմացութիւր վերանում, փոխադարձ հաւատն ու վստահութիւնը աճում, յարաբերութիւնները սերտանում և գործ հլու նոր մղումներ դառնան ստացւում, քաղցրը պարտականութիւն է զրել նուաստիս վերայ, մի յետադարձ հայեացքով մատնանշել յարգելի հասարակու-

Թեանդ առաջ այն ճանապարհը, որով նա ընթացել է և այն գործունէութիւնը, որ նա ունեցել է ներկայ ուսումնական տարուայ ընթացքում, բարեխիղճ գնահատութիւնը թողնելով միանգամայն ձեր բարեհայեցողութեանը: Սակայն կրցանկանայի իմ հաշուէտուութեանը մի փոքրիկ նախարան ևս կցել, որպէսզի ձեր աչքի առաջ աւելի պարզ և որոշ նկարուի հայ ժողովրդական տարրական դպրոցի իսկական պատկերն և այն գծուարութիւնները, որոնց հետ կապուած է այդ սուպարիզում գործող հայ ուսուցչի կեանքը:

Մի ժողովրդի նիւթական, բարոյական, ընտանեկան և դաստիարակչական գարգացման ամենալաւ արտայայտիչը ժողովրդական դպրոցն է և մատաղ սերունդը, որ կոչուած է ապագայում նորա դրօշակակիրը լինելու: Մտէր յառաջագէտ ազգերի ժողովրդական մի դպրոց, նայեցէք այնտեղ տիրող մաքրութեանը, կարգ ու կանոններին, հետեցէք նորա աշակերտուհիներին կամ աշակերտներին դպրոցում, թէ դուրսը, իսկոյն կրնկատէք այն հսկայական տարբերութիւնը, որ կայ նրանց և կիսակիրթ ազգերի մատաղ սերնդի մէջ: Այնտեղ ձեր առաջ խաղում պարում, թուչիտում է թարմ, կենսուրախ, առողջ, մարուր և հարցասէր փոքրիկները մի բազմութիւն, որոնք համարձակ կերպով են նայում դէպի ապագան, որ վարդապոյն է նկարում նոցա լաւատես աչքերում: Յոռետեսութիւնը տեղ չունի նոցա սրտում: Մօտեցէք, խօսեցրէք նրանց և դուք կըհիանաք նոցա քաղաքավարութեան, բարեկրթութեան և առողջ ու խելացի պատասխանների վրայ:

Այստեղ՝ ընդհակառակը. նիհար, դժգոյն, ժամանակից առաջ իմաստուն, անփոյթ, անտարբեր, անմարուր և կասկածոտ մանուկների մի բազմութիւն: Նոցա շարժուածքները, ձևերը, խաղերը, պատասխաններն և առհասարակ ամբողջ էութիւնը մի տեսակ արգահատանք, դառնութիւն և նոյնիսկ զգուանք է յարուցանում ձեր մէջ:

Ի՞նչ կասկած, որ թէ այնտեղ և թէ այստեղ ծնողների և ամբողջ շրջապատի ազդեցութիւնն է անդրադառ-

նում նոցա վարք ու բարքի վերայ և անճնչելի կերպով դրօշմոււմ նոցա մատաղ սրտում:

Դժբաղդաբար մեր դպրոցներն էլ վերջին տեսակին են պատկանում: Չատ հին չէ մեր դպրոցական կեանքն իր իսկական մտքով առած: Դեռ մինչև այսօր էլ բազմութիւ խուլ անկիւններում մտքի թանձր խաւարն է թագաւորում և այդ խաւարի կուռ պարիսպների վրայ ծածանում է Տէր-Թօղիկների և նման խալիֆաների յաղթական դրօշակը: Մեր ժամանակակից մտքով վերցրած ժողովրդական դպրոցներն էլ մի միջիթարական պատկեր չեն ներկայացնում: Դուրսիւնն աւելի քան յուսահատական է: Այնտեղ իրար դիտի են թափուած գլխաւորապէս այնպիսի ծնողների գաւակներ, որոնք պետական դպրոցներ մտնելու ոչ մի հնարաւորութիւն չունին: Այդպիսի անկիրթ և ազբատ ծնողների ուսերի վրայ դրուած դրպրոցները բնականաբար չեն կարող բարգաւաճել ոչ նիւթապէս և ոչ էլ բարոյապէս: Նոցա մանուկներն անպիտակցօրէն դպրոց են բերում այնպիսի արատներ և վատ բնագոյներ, որոնցով դարեր շարունակ նոցա ծնողները բարբարոս ցեղերի սպանիչ լծի տակ շնչիլ են: Այո՛, հայի բնաւորութեան բացասական գծերի ամենամեծ մասը նորա դարաւոր ստրկական կեանքի, նորա վիճակի անկայունութեան արդիւնք է և ոչ բնածին: Սովորելով կուրօրէն հնազանդուել ասիական այս կամ այն բռնաւորի կամքին, իբրև օրէնքի, նա զարգացրել է իւր մէջ ստրկական հոգի: Չպտելով հաճելի լինել բռնաւորներին, նա ստել, կեղծել, շողորթութել է և նոյնիսկ եղբօրը գաւաճանել, առանց խղճի խայթ զգալու: Չփուելով զարգացումով աւելի ցածր ազգերի հետ և բաւական ոյժ չունենալով նրանց վեր քաշել, ինքն է իջել, նրանց հաւասարուել, նրանցից իւրացրել բնաւորութեան վատ գծեր ու հակումներ և իբրև ժառանգութիւն իւր յետնորդներին ւաւնդել:

Դորան պէտք է վերագրել և այն հանգամանքը, որ

հայն իւր հոգեկան ընդունակութիւններով չ'կարողացաւ մի ինքնուրոյն բաղարակըթուլթիւն, մի իւրովի կեանք, մի սեպհական աշխարհահայեացք և գորա հիման վերայ հիմնուած մի օրէնք ստեղծել: Այդ է պատճառը նաև, որ այսօր նա լաւ, պիտանի ոյժ է հանդիսանում մի զօրեղ իշխանութեան ներքոյ, իսկ ինքնավարական գործերում՝ ընդհակառակը. կռուարար, մեծամիտ, եսասէր և բառածախ: Օրէնքի և կարգապահութեան զիտակցութիւնը նա չէ կարողանում իսկական ազատութեան և անհատական հակումների հետ զուգընթացաբար տանել և կեանքի մէջ մի առողջ ներգաշնակութիւն մտցնել, որտեղից և սկիզբն են առնում կռիւների և ընդհարումների այն անվերջ շարքերը, որոնցով այնքան հարուստ է մեր ինքնավար մարմինների, ամենից առաջ՝ դպրոցների պատմութիւնը: Ոչ մի տեղ կարգ ու կանոն չ'կայ, ոչ էլ իրաւունքների և պարտականութիւնների ճիշտ սահմանում, ամէն բանից և ամէնքից բարձր, ազատ սկզբունքների վրայ հիմնուած մի օրէնք: Ոչ որ չ'գիտէ ճշտիւ իւր անելիքի և պահանջելիքի սահմանները, իւր բռնելիք գիրքը դէպի շրջապատը, այլ ամէն ինչ խառն 'ի խուռն և հիմնուած լոկ անհատական ընդունակութիւնների կամ նախաձեռնութիւնների վերայ, որ նոյնն է, թէ պատահականութիւնների վերայ: Այստեղ վատերի շարքում կըլինին, 'ի հարկէ, և լաւերը, բայց, աւանդ, աւելի շատ վատերը:

Ահա այսպիսի մի տխուր, անորոշ և յեղեղովկ իրականութեան մէջ է կոչուած գործելու հայ ուսուցիչը: Նա կոչուած է զիտութեան լուսոյ ճառագայթները սփռելու դէպի հեռաւոր, խուլ ու մութ անկիւնները, նա կոչուած է հայ կեանքի մէջ տիրող խաւարը փարատելու, նորա բնաւորութիւնից բոլոր նորամուտ և արհեստական կերպով պատուաստուած բացասական դժերն արմատախիլ անելու և նորա բնածին, լաւ յատկութիւնները խրախուսելու: Նա կոչուած է ոչ միայն մանուկներին, այլև հասակաւորներին կրթելու, նրանց խելացի կերպով զեկա-

վարելու, նոր ու օգտաւէտ մղումներ տալու, մաքառելով բազմաթիւ խոչընդոտների դէմ:

Այստեղից պարզ է, որ ամենից առաջ նա ինքը պէտք է իւր միջից հանէ դարերից ժառանգած վատ գրծերը: Նա պէտք է իւր դասակարգային ինքնագնահատման հետ միասին նաև զաղափարական լինի: Նա պէտք է լաւ ճանաչէ և ուսումնասիրէ իւր շրջապատը, իւր ժողովուրդը: Այն ժամանակ միայն հայութիւնն էլ կունենայ նախանձելի դպրոցներ, որոնք, բարեկիրթ ընտանիքների հետ միասին ձեռք ձեռքի տուած, կ'առաջնորդեն մատաղ սերունդը դէպի վեր, դէպի կատարելութեան նոր հորիզոններ, դէպի գերմարդը: Ի՞նչ կասկած, որ չպէտք է մոռանալ նաև հայ ուսուցչի նիւթական ապահովութիւնը: Որքան էլ զաղափարական լինի նա, այնուամենայնիւ նա էլ ունի ուտելու, խմելու, հագնելու և ապրելու կարիք: Գործի ծանրութեան այս կողմն արդէն զիտակից ժողովրդի վերայ է ընկնում: Եթէ ժողովուրդը կամենում է ունենալ լաւ, անձնագոհ և պարտաճանաչ ուսուցիչներ, պէտք է նրանց ազատէ նիւթական հոգսերից, ստեղծէ նրանց համար մշտական և գոհացուցիչ մի գոյութեան միջոց, որպէսզի ուսուցիչն ստիպուած չլինի տարին մի տեղ փոխել, կամ դպրոցից դուրս մասնաւոր դասերի կամ գործերի յետից վազել. մի խօսքով՝ ուսուցչութեան հետ միասին նաև նիւթական գոյութեան կռիւ մղել: Այս անկայուն դրութեան շնորհիւ նա չէ կարողանում որևէ տեղ հաստատուն արմատ բռնել, իւր գործին տար կաշել: Ուսումնական տարուայ սկիզբն ու վերջը նորա համար նեարդային տանջանքների մի շրջան են, իսկ ամառուայ հանգստի ամիսները սպասողական դրութեան և անորոշութեան մի դժոխք: Նա, փոխանակ կարգալու և յառաջողիմելու իւր մասնագիտութեան մէջ, նորանոր մեթոդների և սիստեմների հետ ծանօթանալու, ստիպուած է լինում ամբողջ ամառը տեղ որոնելով անցկացնել, որով նորա միտքը միշտ զբաղուած է լինում, միշտ լար-

լած, միշտ անհանգիստ: Այստեղ տուժում են միաժամանակ դպրոցն և ուսուցչի առողջութիւնը: Քիչ չեն, ՚ի հարկէ, նաև այնպիսի ուսուցիչներ, որոնք իրենց համեստ տեղից գոհ չլինելով, աւելի լաւն են փնտռում և, գտած դէպքում, մոռանում են միանգամայն իրենց անցեալ տարուայ գործելավայրը, իրենց ձեռակերտը: Այս չարիքի էլ գլխատըր պատճառը դասագների անհամաչափութիւնն է մեր դպրոցներում: Պէտք է դպրոցը բարեկարգել, Պէտք է այնտեղ իրար շփուող գործոնների՝ հոգաբարձուների, ուսուցիչների և ուրիշ իշխանութիւնների յարաբերութեան և իրաւունքների սահմանները ճշտիւ որոշել: Ուսուցիչների կեանքը պէտք է ապահովել: Այն ժամանակ միայն մեր չարաբաստիկ դպրոցներից ազմուկները կրվեբանան և խաղաղ յառաջադիմութեան շըրջանը կսկսուի: Իսկ մինչ այդ՝ ծանր է խաչը, խաւար շըրջապատը, փշոտ ճանապարհը, տատասկոտ ուղին և թունաւոր բաժակը հայ ուսուցչի: Սակայն որքան խաւար է շըջապատը այնքան աւելի պայծառ է փայլում աստղը, որքան դժուար է ճանապարհը և ծանր պայքարը, այնքան մեծ է հերոսի յողթանակը, թէև մարդիկ և աշխարհը չեն կարողանում այդ տեսնել, չեն կարողանում գնահատել: Եւ եթէ գնահատում էլ են, ուշ է լինում, երբ արդէն թունաւոր բաժակը մինչև մրուրը դատարկած է լինում և խաչն արիւնաներկ: Բայց հէնց այդ թունաւոր բաժակի և արիւնաներկ խաչի մէջ է կայանում հերոսի մեծութիւնն և զազափարի յողթանակը: Լաւ պատրաստւած, իրենց կոչման հաւատարիմ և պարտաճանաչ ուսուցիչները մի մի հերոսներ են, մի մի լուսատու ջահեր: Նորա են, որ աշխարհը, կեանքը կերպարանափոխում, յեղաշըջում են, լուռ ու մունջ, առանց թմբուկ զարկելու և փողեր փչելու և առանց արժանապէս գնահատուելու: Բայց հաւատացէք ինձ, որ Աղէքսանդր Մակեդոնացու, Աննիբալի, Նապոլէոնի և նման պէնրի հերոսների պատերազմի գոռ դաշտերում, սրերի շաւաչի, թնդանօթնե-

րի որոտի, գնտակների տարափի և սմբակների գոփիւնի տակ տարած յողթանակներն ոչ այնքան նրանց են պատկանում, որքան նրանց ուսուցիչներին, այն համեստ ու խելացի մարդկանց, որոնք՝ մի փակ սենեակում, չորս պատերի մէջ՝ աշխարհից և մարդկանցից հեռու՝ վարպետօրէն մշակել են իրենց յանձնուած հարուստ հում նիւթը. կռել, կոփել, ձկել ու բովել են այդ հանձարների հոգին և ուղղութիւն տուել նոցա կամքին ու բնաւորութեանը: Նոյնը կարելի է ասել նաև մտքի հերոսների համար: Նոյն համեստ, բայց հօգը ուսուցիչներն են այն գործոնները, որոնց պարտական ենք մենք մարդկային մտքի և գեղարուեստի յառաջադիմութիւնը: Պլատոն, Արիստոտէլ, Ռաֆայէլ, Մ. Անջէլլօ, Նիւտօն, Զիլլէր, Զէքսպիր, Բայրըն, Գեօթէ և նմաններն իրենց ուսուցիչների ձեռակերտներն են: Երանի այն ազգին, որ լաւ ուսուցիչներ ունի:

Կրթութեան և դաստիարակութեան գործում շատ մեծ դեր են խաղացել նաև կանայք ու մայրերը, իրենց զաւակների մատաղ սրտերում դնելով մեղմ բարբիւրի, ազնիւ բնաւորութեան, գեղեցիկ և բնբոյշ զգացմունքների առաջին սաղմերը: Բայց դորա մասին այսօր և այստեղ երկառել չեմ կարող, որովհետև շատ հեռու կրտանէր, ուստի անցնում եմ նիւթին:

Աղէքսանդրապօլի սուրբ Փրկչի դպրոցը, թէև ունի իւր պատմութիւնը, բայց վերականգնել այդ պատմութիւնը դժբաղադբար անկարելի է, նիւթերի պակասութեան պատճառով: Նորա դիւանը (արխիւը) ձեռքէ ձեռք անցնելով և անխնամ մնալով, մեծ մասամբ կորել է: Անցեալում նա ունեցել է չորս դասարան, վիճակային անունն է կրել և անփիճելիօրէն աւելի բարգաւաճ վիճակի մէջ է գտնուել, բան այսօր: Գոնէ այդ են ցոյց տալիս այն ժամանակուայ սանների մեր ձեռքը հասած գրաւոր աշխատութիւնները:

Դորա պատճառներն են.

ա) որ ս. Փրկչի դպրոցը վիճակային է եղել և ամբողջ վիճակի սիրեցեալ զաւակն ու հոգա-
ծութեան առարկան:

բ) որ այն ժամանակ քաղաքումս չեն եղել այլ միջնակարգ և պետական դպրոցներ և բնա-
կանաբար այս դպրոցում սովորել են նաև միջին ու բարձր դասակարգերի՝ և ուրեմն աւելի բարե-
կիրթ ընտանիքների զաւակներ,

գ) որ սա, իբրև վիճակային և միջնակարգ դպրոց, անպայման վայելել է ժողովրդի բոլոր խաւերի վստահութիւնն ու բարեացակամութիւնը:

Այսօր այս բոլոր պատճառներն էլ վերացել են և ս. Փրկչի դպրոցը դարձել է հայ ժողովրդական - տարրական դպրոցներից մէկն իւր բոլոր արատներով: Նա իւր մէջն է առնում այնպիսի մանուկներ, որոնք իրենց նախադպրոցական և արտադպրոցական կեանքում վարակում են բարոյական բազմաթիւ ախտերով, որոնց բուժելը, արմատաբի խլելը միանգամայն դժուարացնում են դպրոցի գործը, եթէ ոչ անկարելի դարձնում: Աշակերտը դպրոցում մնում է օրական հինգ ժամ, այն ինչ օրուայ մեծ մասը նա անց է կացնում դարձեալ ապականուած մթնը-լորտում, ընտանիքում, թէ փողոցում և կաթիլ կաթիլ ծծում նոցա արտադրած բարոյական թոյնը: Չնայելով, որ մեր աշակերտների մեծ մասը քաղաքացի են, բայց քաղաքավարութեան նշոյլ անգամ ցոյց չեն տալիս, ընդհակառակը՝ կոպիտ, անտաշ, բիրտ, անընդունակ, անտարբեր, անմարուր, ստախօս և յանդուգն: Ինձ պատահել է առաջին բաժնի ութը տարեկան երեխայից այնպիսի խօսքեր լսել և գործեր տեսնել, որ, ուղիղն ասած, ամօթիցս կարժրել եմ: Այն ինչ նրանց համար այդ մի շատ սովորական բան է, ընտանիքի և փողոցի հազարաւոր պատկերներից միայն մէկը: Եւ որքան են դարմանում, երբ նկատողութիւն էք անում: Իսկ եթէ սորա վերայ աւելացնենք նաև այն, որ վերջին տարիների աննորմալ և

յեղյեղուկ կեանքն այնքան վատ էր ազդել մեր աշակերտների տհաս ուղիղի վերայ, որ նորա «ազատութեան» վսեմ անուան տակ վայրենի բնագոյների սանձարձակութիւնն էին հասկացել, պատկերը կատարեալ կըլինի:

Ահա այն նիւթը, որ յանձնուած է եղել մեր դպրոցի ուսուցչական խմբին, կըթելու և դաստիարակելու:

Ուսումնական տարուայ սկզբին ուսուցչական խումբը զրեթէ ամբողջացած էր: Օգոստոսի 12-ից համարենա սկսեց իւր նախապատրաստական նիստերն ու խորհրդակցութիւնները: Առաջին կարևոր խնդիրը, որ սեղանի վրայ էր դրուած, Գ-րդ դասարանի բացման խնդիրն էր: Չնայելով, որ՝

ա) անցեալ ուսումնական տարուայ վերջին՝ դպրոցիս վարչութիւնները վերջին Գ-րդ դասարանցիներին աւարտական վկայականներ չէին բաժանել, ասելով, որ Գ-րդ պէտք է բացուէ,

բ) որ դորա համար թեմական իշխանութիւնից արդէն թոյլտուութիւն էր ստացուած և

գ) որ թերթերում պաշտօնապէս յայտարարուած էր բայց դպրոցիս Հոգաբարձութիւնը, խնդիրը սրտին շատ մօտ ընդունելով հանդերձ, զրամական սուղ միջոցները պատճառ բերելով, հրաժարուում էր այդ բայլն անելուց: Հոգաբարձական և ուսուցչական խառը ժողովների խորհրդակցութեանց ժամանակ, այդ ծրագիրն իրականացնելու համար, առաջարկուել են զանազան միջոցներ, որպէսզի առանց դպրոցի բիւջէն աւելացնելու մի ելք գտնեն: Օրինակ ուսուցիչներին առաջարկուել է 2—3 ձրի դասեր վերցնել, կամ առաջին բաժանմունքը փակել, կամ երկու զուգընթաց դասարաններ միացնել և այլն: Բայց բոլորն էլ ապարդիւն են մնացել և որոշուել է վերջնականապէս Գ-րդ դասարանցիներին վկայականներ տալ և ճանապարհ դնել: Սրանով ստեղծուում էր նրանց համար մի անելանելի դրութիւն: Գ-րդի յուսով ապրելով, ոչինչ չէին արել և այժմ էլ ոչ մի բանի ձեռնարկել չէին կազմող:

Թեմական դպրանոցների յաջորդ դասարանը մտնելու համար չէին պատրաստուել, իսկ համապատասխան դասարանը մտնելու համար՝ հասակները մեծ էին: Բայց զրանից մեր և նրանց ծրագրերի մէջ մեծ տարբերութիւններ կային: Դպրոցիս Պատուարժան Հոգաբարձութիւնը, ի նկատի առնելով այս բացառիկ դրութիւնը, պաշտօնական յանձնարարականներով դիմեց յիշեալ դպրանոցների և Գ. ճեմարանի վարչութիւններին և խնդրեց զիջող լինել մեր աշակերտների վերաբերմամբ: Բայց նրանց մեծ մասն էլի մնաց գուրսն և հնարաւորութիւն չունեցաւ ո՛չ այստեղ և ո՛չ էլ ուրիշ տեղ սովորելու:

Ապագայում նման անախորժութիւններից խուսափելու համար, դպրոցիս խառը-ժողովը որոշեց գէթ մեր և թեմական դպրոցների ծրագիրը հաւասարեցնել, որպէսզի այստեղ աւարտողները կարողանան փոխադրուել և շարունակել թեմական դպրանոցներում: Պաշտօնական դիմումն եղաւ յիշեալ վարչութիւններին, բայց բար լուութիւնն և Յունուարին եկող անորոշ երկտողերն եղան նրանց պատասխանը: Չգիտէինք, որ Թիֆլիսից ու Երևանից պատասխան ստանալու համար՝ չորս ամիս սպասել է պէտք, այսինքն՝ օգոստոսից մինչև Յունուար: Բայց ինչո՞ւ գարմանալ, այսպէս են հայերիս բոլոր գործերը:

Երկրորդ դժուար խնդիրն ընդունելութեանց խնդիրն էր: Տրուած էին մօտ 300 խնդիրներ, բոլորն էլ փոքր բաժանմունքների համար: Ամէնքին բաւականութիւն տալու ոչ մի հնարաւորութիւն չկար: Նախկին տարիների անճարութիւնից գործադրած վիճակահանութեան եղանակը միանգամայն անյարմար գտնելով, դպրոցիս Մանկավարժական Խորհուրդն որոշեց ձեռք քաշել այդ սիստեմից և այլ միջոցներ խորհել, հնարաւոր եղածին չափ շատերին ընդունել: Նա, գտնելով, որ խնդրատուներից 7, 8 և մինչև 9 տարեկան հասակ ունեցողները դեռ կարող էին մի կերպ սպասել, մինչդեռ 9 և 10 տարեկանները՝ ո՛չ, և, կամենալով վերջիններիս էլ սովորելու հնարա-

ւորութիւնից չզրկել, որոշեց Ա. բաժանմունքում ընդունել անխնդիր, առանց վիճակի, բոլոր 9 և 10 տարեկաններին, իսկ զրանցից փոքրերին և մեծերին մերժել: Բայց որովհետեւ այդպիսիների թիւն էլ շատ էր և անկարելի էր մի դասարանում տեղաւորել, բնականաբար առաջ էր գալիս մի Ա. գուզընթաց բաժին բանալու կարիքը: Այս առաջարկը սակայն աւելացնում էր դպրոցի դասարանների թիւն և ընդարձակում բիւջէն, մի հանգամանք, որ արդելը էր հանդիսացել Հոգաբարձութեանը Դ-րդ դասարան բանալ: Նոյնիսկ այժմ էլ նա աւելի Դ-ի, բան Ա-ի կողմնակից էր: Բայց այս դժուարութիւնն էլ հարթուեց նրանով, որ խառը ժողովով որոշուեց երկու հինգերորդ բաժինները, որոնց աշակերտները շատ բնացել էին, միացնել և դորա փոխարէն մի Ա. գուզընթաց բաժին բաց անել, որով դեռ մի 360 ըուբլու էլ խնայողութիւն եղաւ: Այսպիսով մեր դասարանների թիւն եղաւ 7. Ա. հիմն. Ա. գուզ. Բ. և Գ. բաժիններ և Ա. Բ. և Գ. դասարաններ: Առաջին գուզընթաց բաժնի բացուելով, պէտք էր ընդունելի աշակերտների թիւն էլ շատացնել, բանի որ միայն 9 և 10 տարեկաններն երկու դասարան չէին կարող լցնել: Եւ որովհետեւ Մանկ. Խորհրդի ցանկութիւնըն է եղել միշտ՝ առաջ աւելի մեծերին բաւարարուտալ, որոնց դպրոցական տարիքը կորչում էին և ապա փոքրերին, ուստի որոշեց սակաւ բացառութեամբ Ա. բաժիններում ընդունել նաև այն 11 և 12 տարեկան խընդրատուներին, որոնք Բ-ի համար անպատրաստ էին գրտնուել: Սրանցից աւելի մեծ հասակ ունեցողներն էլ ենթարկուեցան բնութեան և ընդունուեցան համապատասխան դասարաններում, կամ մերժուեցան: Այստեղ էլ առաւելութիւն տրուեց նրանց, որոնք այս կամ այն ծխական դպրոցն աւարտել էին, իսկ նրանց, որոնք չէին աւարտել, այլ լոկ տեղափոխուել էին կամենում, խորհուրդ տրուեց շարունակել իրենց դպրոցներում: Այս բոլոր գործողութիւններից յետոյ 300 խնդրատուներից ընդուն-

ւեցան միայն 105 նոր աշակերտներ, որոնք հների հետ
անում էին 325 հոգի. Այս 325 հոգի ցուցակագրուած ա-
շակերտներից ներկայացան և ուրեմն աշակերտ համար-
ւեցան միայն 300 հոգի. Սոցա վերայ աւելացան նաև
Յունուարին ընդունուած 12 հոգին, որով բոլոր աշակերտ-
ների թիւն եղաւ 312, որոնք և դասարանների վերայ բա-
ժանուած էին այսպէս.

Դասարաններ.	ՐԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ				ԴԱՍԱՐԱՆՆԵՐ		
	Ա. հ.	Ա. գ.	Բ.	Գ.	Ա.	Բ.	Գ.
Հին աշակերտներ.	4	—	37	46	41	45	22
Սեպտեմ. ընդուն- ւածներ.	37	41	10	8	9	—	—
Յունուարին ըն- դունուածներ.	4	2	2	2	2	—	—
Ընդհանուր գումար	45	43	49	56	52	45	22 312

Այս աղիւսակից պարզ երևում է, որ դասարանները
չափազանց բազմամարդ են եղել և հակամանկավարժա-
կան: Բայց ուսուցչական խումբը, դորան սկզբունքով հա-
կառակ լինելով հանդերձ, ստիպուած է եղել համակեր-
պուել տեղական պայմաններին. Այս զէպքում, ի հարկէ,
նա ի նկատի է ունեցել անպայման նաև այն հանգաման-
քը, որ տարուայ ընթացքում աշակերտներից շատերը,
տեղական սովորութեան համաձայն, կրպակասին և դասա-
րանները նորմալ ընթացք կ'ստանան. եւ չեն էլ սխալ-
ւել, ինչպէս այդ ցոյց է տալիս մեր տարուայ վերջին
արդիւնքի աղիւսակը:

Ընդունելութիւնից և դասացուցակը կազմելուց յետոյ
Մանկ. Խորհրդի առաջին հոգսն է եղել դաստիարակներ
որոշել իւրաքանչիւր դասարանի համար, որպէսզի մի
կողմից դասարանների հսկողութիւնն աւելի կանոնաւոր
և մշտական լինի և միւս կողմից սերտ յարաբերութիւն և

կապ ստեղծուի աշակերտների, նոցա ծնողների և ուսու-
ցիչների մէջ. Այդ նպատակով պ. պ. դաստիարակները շըր-
ջել են աշակերտների տները, ծանօթացել նոցա միջավայ-
րի, ընտանեկան զրութեան և պարապելու յարմարու-
թիւնների հետ, որպէսզի աւելի լաւ և ճիշտ կեր-
պով կարողանան կռուել կրթութեան և դաստիարակու-
թեան արգելք հանդիսացող խոչընդոտների դէմ. Այսպի-
սի զէպքերում, ցաւ ի սիրտ, պէտք է ասել, որ մեր ծը-
նողներն ինչ ինչ դիտաւորութեամբ թապցնում են իսկա-
կան եղելութիւնը: Բայց մենք Պարսկաստանում կամ
Տաճկաստանում չենք գտնուում և ոչ էլ որևէ յետին մըտ-
քով ենք հաւաքում այլ տեղեկութիւնները, այլ միայն
աշակերտների բարբերը փշացնող և ուսման արգելք հան-
դիսացող պատճառները ճանաչելու և նրանց ոչնչացնելու
համար:

Այդ ժողոված վիճակագրական տեղեկութիւններից
երևում է, որ մեր աշակերտներից 272 հոգի բաղաբից
են, 7-ը Տաճկաստանից գաղթածների որդիք և 33-ը այս
գաւառի շրջակայ գիւղերից:

Ըստ ծնողների կոչման նոքա բաժանուած են՝

Մանր առև.տը. նպարավաճ. որդ.	59 հ.	կամ ամբ.	18- ⁰ / ₁₀₀
Արհեստաւորների որդիք	92 հ.	»	35 »
Երկրագործների	12 հ.	»	4 »
Բանուորների	42 հ.	»	13 »
Հոգևորականների	5 հ.	»	2 »
Ստորին ծառայողների	» 25 հ.	»	8 »
Այլ և այլ զբաղ. ունեցող.	» 61 հ.	»	20 »
Ընդործների	» 16 հ.	»	5 »

Ապրուստի տեսակէտից՝

Լաւ ապրուստ ունին	32 հոգի	կամ	10- ⁰ / ₁₀₀
Բաւարար՝	133 »	»	43 »
Ոչ բաւարար՝	105 »	»	34 »
Ծայրայեղ չբաւար.	42 »	»	13 »

Պարապելու տեսակէտից՝

Յարմար բնակարաններ ունին	142 հոգի	կամ	46 տոկոսը
--------------------------	----------	-----	-----------

Յարմար բնակարաններ չունին 170 հոգի կամ 54 տոկոսը: Սենեակ, լոյս, սեղան, սնունդ և այլն ունին 162 հ. կմ. 52-⁰/₀:
» » » չունին 150 հ. » 48 »:

Բացի դրանից պէտք է նկատել, որ աշակերտների մեծ մասն իրենց խանութային կամ տնային գործերին օգնում են, իսկ 45 հոգի նոյնիսկ իբրև արհեստաւորի իսկական աշակերտ՝ ճաշերից յետոյ աշխատում են արհեստանոցներում և բնականաբար դասերի սովորելու յարմարութիւնից զրկուում: Եւ ինչ զարմանք, եթէ նոցա մէջ մեռնում է որեէ հետաքրքրութիւն թէ՛ դէպի արհեստն և թէ՛ դէպի ուսումն: Դեռ վարպետի հրամանները նա կրկատարէ յականայից, հայհոյանքների կամ նոյնիսկ բռունցքների տարափի տակ, իսկ դասերը: Ս, միւս օրն էլ զասարանում նա կրնատէ բոլորովին անտարբեր և երբ ուսուցիչը դաս հարցնէ, նա վեր կրկենայ և պլատօնական սառնասրտութեամբ կրպատասխանէ. «Չգիտեմ, չեմ սովորել», առանց որեէ պատճառի, ինչ անէ ուսուցիչն այս դէպքում:—

ՈՒՍՈՒՑՉԵԿԱՆ ԽՈՒՄԲԸ

Ուսումնական տարուայ սկզբից, ինչպէս ասացի, ուսուցչական խումբը գրեթէ լրիւ էր, պակասում էին երկու ուսուցիչներ՝ ընդհանուր պատմութեան, Հայոց պատմութեան, ընդհանուր աշխարհագրութեան և կրօնական առարկաների համար և մի վերակացու: Բայց որովհետև Հոգաբարձութեան կողմից նուաստիս համար ենթադրուած և վերապահուած բնագիտական առարկաներն են չըստանձնեցի, իբրև ոչ իմ մասնագիտութիւնն և գորա փոխարէն խնդրեցի պատմութեան և աշխարհագրութեան դասեր, ուստի բաց մնացին միայն բնագիտութեան և կրօնագիտութեան դասեր և մէկ վերակացուական պաշտօն: Սյդ առարկաների համար յարմարաւոր ուսուցիչներ չգտանք, ուստի դպրոցիս հոգաբարձու՝ Հ. Յակոբ բա-

հանայ Խաչվանքեանը, հրաժարուելով հոգաբարձութիւնից, ստանձնեց յիշեալ դասերն և վերակացութեան պաշտօնը: Առաջին գուզրնթաց բաժնի բաց մնացած 16 դասի համար էլ հրաւիրուեցաւ երկար տարիներ մեր զըպրոցներում ծառայած և դպրոցիս հոգաբարձութեան բարտուղար պ. Ա. Արշակունին: Ուսուցչական խումբը լրանալուց յետոյ՝ տեղի ունեցան մի քանի փոքրիկ փոփոխութիւններ դասերի նկատմամբ ի հարկէ, փոխադարձ համաձայնութեամբ:

Թէև դպրոցիս թէ՛ հոգաբարձական և թէ՛ ուսուցչական մարմինների ցանկութիւնն է եղել, մի ուսուցչի՝ հնարաւոր եղածին չափ թիչ դասեր և առարկաներ տալ, որպէսզի նա աւելի լաւ կենտրոնանալ կարողանայ, իսկ վերակացուներին ևս առաւել թիչ կամ ամենեւին դասեր չտալ: Սակայն շնորհիւ ուսուցիչների քննութեան, առարկաների շատութեան, դասերի անհամաչափութեան և զասագնի փոքրութեան անկարելի եղաւ:

Դասարաշխութեան և ուսուցչական կազմի վերջնական պատկերը հետևեալն է:

1469/1



Ուսուցիչներէ անուն և ազգանունները:	Ո՞րտեղ է սովորել:	Ընդհանրապէս քանի տարի է ուսուցիչ արի:	Սյունի քանի տարի է ուսուցիչ:	Ի՞նչ է ասանդում:
պ. Գէորգ Միքայէլեան.	Ներսիսեան դըպրանոցում. ունի ուս. ցենդ.	20	11	Հ. լեզու, Թուարանութիւն, Երկրաչափ. ձևագիտ, Կրօն
պ. Եփրեմ Գրիգորեան.	Երևանի ուսուցսեմինարիայում.	13	2	Ռ. լեզու, Թուարանութիւն, Քաղաք. ուսումն.
պ. Խ. Ստահլեան.	Թիֆլիսի Աղէքս. ուսուցչ. ինստիտուտում.	18	1	Ռ. լեզու, Ռ. պատմութիւն, Բնակ. պատմութիւն, Առողջապահութիւն, Նկարչութիւն.
Հ. Յովհաննիսեան.	Գ. ճեմ. Լայպց. առևտր. բարձր. կուրսեր. և Լայպց. համալս. կանդ. փիլիս.	8	1	Հ. պատմութիւն. Ընդհ. պատմութիւն, Կրօն.
Հ. Յակովբ քահ. Խաչվանքեան.	Գ. ճեմ. լրիւ.	9	1	Կրօն, Հ. լեզու, Բնագիտութիւն.
պ. Պարոյր Բարայեան.	Պետերբ. կայսերաժշտ. կապել.	8	4	Երգեցող. երաժշտ. Գծագրութիւն.
Պ. Պետրոս Այվազեան.	Ներսիս. դըպրանոցում.	4	4	Հ. լեզու, Թուարանութիւն, Գծագրութիւն.
պ. Ռ. Աւետիսեան.	Գ. ճեմ. Զ. դաս. ունի ուս. ցենդ.	9	4	Հ. լեզու, Աշխարհագրութիւն, Հայրենագիտութիւն.

Ք Ս Ն Ի				Գ Ս Ս.			Ընդամենը քանի քառասուններ:	Ի՞նչ կողմնակի պաշտօն ունի:	Սողա վարձը:	Սմբողջ սոսնիկը:
Ո՞ր բաժիններում:				Ո՞ր դասարաններում:						
Ա.Տ.	Ա.դ.	Բ.	Գ.	Ա.	Բ.	Գ.				
—	7	—	—	—	—	—	14	Հոգաբարձութեան քարտուղար.	120	540
—	5	—	—	—	—	—				
—	2	—	—	—	—	—				
—	—	—	—	6	6	—	24	Գրադարանագետ.	50	770
—	—	—	—	—	3	3				
—	—	—	—	1	1	2				
—	—	2	—	—	—	—	24	—	—	720
—	—	5	5	—	5	—				
—	—	—	4	4	—	—				
—	—	—	—	—	—	1	21	Վերակացութիւն.	150	780
—	—	—	—	5	—	5				
—	—	—	—	—	1	1				
—	—	—	—	—	3	3	14	Աւագ ուս.	780	1200
—	—	—	—	—	—	1				
2	2	—	—	—	2	2				
—	—	—	2	2	2	1	19	Վերակացու.	150	720
—	—	—	6	—	—	—				
—	—	3	3	—	—	—				
2	2	2	2	2	2	1	15	—	—	450
2	—	—	—	—	—	—				
7	—	—	—	—	—	—				
5	—	4	—	—	—	—	22	Քարտուղար Մանկ. ժող.	50	710
—	—	2	2	2	—	—				
—	—	—	—	—	—	5				
—	—	7	—	—	—	—	20	Վերակացու.	150	750
—	—	—	—	2	2	2				
—	—	—	2	—	—	—				

Այսպիսով ուրեմն զպրոցիս ուսուցչական խումբը բաղկացած էր 9 հոգուց: որոնցից մէկը վարում էր նաև աւագ ուսուցչութեան պաշտօնը, երեքը վերակացութեան, մէկը զբարձրագոյն պատմութեան, մէկը Հոգաբարձութեան և մէկը Մանկավարժական Խորհրդի բարտուղարութեան պաշտօնները:

Հաբաթական դասերի թիւը բոլոր առարկաներից և բոլոր բաժանմունքներում 173 էր, որոնք և բաժանուած էին այսպէս.

Գրասարան.	Գրօն,	Հ. լեզու,	Բ. լեզու,	Թուար.	Երկր. ձե- ւագ.	Հ. պատմ.	Բ. պատմ.	Ը. պատմ.	Քաղ. ուս.	Հայրենագ.	Սշխարհգ.	Քնական պատմ.	Առողջա- պահութ.	Երաժշտ.	Երգեցող.	Նկարչութ.	Գրասերի ընդհ. թիւը	
	Բաժանմունքներ.	Ա. հ.	2	7	—	5	—	—	—	—	—	—	—	—	—	2	2	18
	Ա. Գ.	2	7	—	5	—	—	—	—	—	—	—	—	—	2	2	18	
	Բ.	2	7	5	4	—	—	—	—	—	—	—	—	—	2	2	22	
	Գ.	2	6	5	4	—	—	—	—	2	—	3	—	—	2	2	26	
Գրասարաններ.	Ա.	2	6	5	4	1	2	—	—	—	2	3	—	1	1	2	29	
	Բ.	2	6	5	3	1	2	1	2	—	2	3	—	1	1	1	30	
	Գ.	1	5	5	3	2	2	1	2	1	—	2	3	1	1	—	30	
	Գում.	13	44	25	28	4	6	2	4	1	2	6	12	1	3	10	12	173

Քննութիւններն և զբաղմունքներն սկսուել են Սեպտեմբերի 1-ից, իսկ կանոնաւոր դասերը՝ Սեպտեմբերի 6-ից: Ամբողջ ուսումնական տարուայ ընթացքում 173 օր զբաղմունք է եղել: Պարսպած ժամերի թիւը 4757 է, միջին թուով օրական 27,5 ժամ:

Ուսուցիչների բաց թողած և աւելորդ պարապած դասերը տալիս են հետևեալ պատկերը.

Անուն եւ ազգանուն.	Քանի՞ դաս է բաց թողել.	Քանի՞ դաս է աւել պարապել	Քանի՞ անգամ է ուշացել.
պ. Ա. Արշակունի	2	1	17
պ. Գ. Միքայէլեան	3	3	1
պ. Ն. Գրիգորեան	9	1	6
պ. Խ. Սահակեան.	23	4	4
Հ. Յովհաննիսեան.	17	31	—
Հ. Յ. քհն. Խաչվանքեան.	10	7	1
պ. Պ. Բարայեան.	4	8	—
պ. Պ. Սյվաղեան.	34	—	8
պ. Ռ. Աւետիսեան.	8	13	1
Ընդամէնը	110	4268	38=10ժ.

Թէ բացակայութիւնների և թէ ուշանալու դէպքերն եղել են մեծ մասամբ յարգելի պատճառներով:

Աշակերտների բաց թողած դասերը տալիս են հետևեալ պատկերը:

Գրասարաններ.	Գրասարանները.	Քանի՞ աշակ. կան.	Քանի՞ դաս են թողել.	Միջին թիւ.
		Ա. հ.	45	977
	Ա. Գ.	43	913	25
	Բ.	49	1486	32
	Գ.	56	1892	45
Գրասարաններ.	Ա	52	1738	45
	Բ.	45	2683	74
	Գ.	22	821	45
	Ընդամէնը	312	10510	35

Ինչպէս այս ազիւսակից երևում է Բ. գրասարանի աշակերտներն ամենից շատ են բացակայել և այս հանգամանքն անպայման ազդել է նոցա ընդհանուր յառա-

չադիմութեան վերայ և կարելի է ասել դպրոցի ամենա-
թոյլ դասարանն էր ներկայացնում տարուայ ընթացքում,
ինչպէս և փոխադրութեանց աղիւսակն է ցոյց տալիս:

ՈՒՍՈՒՑԶՆԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

Այս ուսումնական տարուայ ընթացքում մեր ու-
սուցչական խումբն ունեցել է 38 մանկավարժական հերթա-
կան նիստ: 6 հատ հոգաբարձական և մանկավարժական
խառը ժողովներ և մէկ փորձնական դասի քննութիւն. ընդա-
մէնը 45 ժողով: Բացի դրանցից, ունեցել ենք նաև աշա-
կերտական հանդէսների, խաղերի, զբօսանքների, ձրինե-
րի ընտրութեան և (ուրիշ) նման խնդիրների վերաբե-
րեալ բազմաթիւ խորհրդակցութիւններ, որոնց մասին
արձանագրութիւններ չեն կազմուած:

Ժողովների զբաղմունքների նիւթ են եղել, բացի
առօրեայ ընթացիկ խնդիրներից նաև մանկավարժական
հիմնական խնդիրներ, որպիսիք են՝ ծրագիրների մշա-
կումն, դասագրքերի և տետրերի ընտրութիւն, կրթական
և դաստիարակչական հիմունքների մշակումն, դպրոցա-
կան կարգապահութեան և առողջապահութեան վերաբե-
րեալ խնդիրներ, դասերի բաժանումն, աշակերտներին
գրքեր, տետրեր և այլ դասական պիտոյքներ մատակա-
րարելու խնդիր. նրանց ընտանեկան, տնտեսական և բա-
րոյական դրութեան մասին խորհրդակցութիւններ, ծնո-
ղական ժողովներ, աշակերտական խաղեր, զբօսանք-
ներ, հանդէսներ. ընթերցանութեան, խնդիր, երկամսեայ և
տարեկան յառաջադիմութիւններ, կիսամեկային ընդու-
նելութիւն, քննութիւն և այլն:

Ուսուցչական ժողովներից բացակայել են.

- պ. Ա. Արշակունի 11 անգամ,
- պ. Ե. Գրիգորեան 1 անգամ,
- պ. Խ. Սահակեան 8 անգամ,
- Հ. Յ. Բաճ. Խաչվանքեան 3 անգամ,
- պ. Պ. Բաբայեան 2 անգամ,

- պ. Պ. Այվազեան 4 անգամ,
- պ. Ռ. Աւետիսեան 1 անգամ, ընդամէնը 30 անգամ:

Մանկավարժական Խորհրդի անունով ստացուել են
15 - թղթեր, դուրս են գնացել 19:

Ծ Ր Ա Գ Ի Ի Ն Ե Ր.

Իւրաքանչիւր դպրոցի ծրագիրը կազմում է նորա
ուղեցոյց ոգին և առաջնորդը: Մեր դպրոցն՝ իբրև ծխա-
կան դպրոց չ'պէտք է, ի հարկէ, իրեն համար մի առան-
ձին, բացառիկ ծրագիր կազմէր, այլ պէտք է աշխատէր
հնար եղածին չափ մօտենալ 1906 թուին կազմած նա-
խագծին: Որքան էլ որ խնամքով կազմուած լինի այս
նախագիծը, այնուամենայնիւ չէ կարող բաւականութիւն
տալ բոլոր դպրոցների տեղական ինքնուրոյն պահանջնե-
րին: Որքան էլ որ նորա իւրաքանչիւր մի կէտն առան-
ձին կարգալիս մեզ դուր է գալիս, այնուամենայնիւ մեծ
զժուարութիւնների ենք հանդիպում նրան իրականացնե-
լիս, մանաւանդ այն առարկաների նկատմամբ, որոնք
դասագրքեր չունին և կամ մտցրուած են՝ իբրև առան-
ձին առարկայ շարաթական մէկ դասով: Այս հանգամանք-
ներն ի նկատի առնելով, դպրոցիս Մանկ. Խորհուրդն
իւրաքանչիւր ուսուցչի ազատութիւն է տուել, այս նա-
խագծի սահմաններում, առանց խոշոր շեղումների, դա-
սերի քանակի և տեղական պայմանների համեմատ՝ ըստ
իւր բարեհայեցողութեան ծրագիր կազմել և Մանկ. Խոր-
հրդի հաւանութիւնն առնելուց յետոյ, գործադրել:

Դասագրքերի, տետրերի եւ այլ դասական պիտոյքների
մատակարարութիւնը.

Մանկ. Խորհուրդն ի նկատի առնելով դասական պի-
տոյքների մատակարարութեան յարմարութիւնն և նրանց

միանմանութեան անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը, լաւ համարեց իւր վերայ վերջնել այդ դժուարութիւնը, պ. պ. դաստիարակների միջոցով: Սա մի մեծ գոհաբերութիւն էր ուսուցիչներին կողմից, որոնք առանց այն էլ ծանրաբեռնուած էին: Բայց նորա յանձն առան այդ գոհաբերութիւնը, շատ անգամ նոյնիսկ նիւթական վնաս կրելով, յանուն գործի յաջողութեան: Որպէսզի բոլոր յաստիարակներն առանձին գործ չունենան զբավաճառների հետ, բարւոք համարուեց, որ մեր ուսուցիչներից մէկը կամ երկուսը յանձն առնեն զբավաճառների հետ յարաբերութեան մէջ մտնել, նրանցից ստանալ դասական պիտոյքներ և յանձնել դաստիարակներին: Գրքեր մատակարարելու դժուարութիւնը յանձն առաւ պ Պ. Այվազեանը, իսկ տետրերինն և այլ դասական պիտոյքներինը պ. Ռ. Աւետիսեան, որի համար և արժանի են հրապարակային շնորհակալութեան:

Սորանով վերանում էր ծնողների անփութութեան, անտարբերութեան կամ աղքատութեան շնորհիւ յառաջացած՝ և մեր դպրոցներին յատուկ երկու երեք ամիս տևող «Գիրք չունիմ», «Տետր չունիմ» կամ «Իմա գրանից չէ»ների սխտեմը: Բացի դրանից՝ աւելի մեծ օգուտը կայանում է նրանում, որ բոլորի տշխատանքների մէջ թէքանակի և թէ որակի տեսակէտից միանմանութիւն էր մտնում և մաքուր պահուում դպրոցում: Բոլորովին հակառակ պատկերը կստանայինք, եթէ ամէնքն իրենց ուզած տետրերը գնէին և կեղտոտ զբաղանակներում դպրոցից տուն և տնից դպրոց բաշէին, կեղտոտէին կամ շատ անգամ տանը մոռանային և զրութեան դասերին առաստաղի բծերը համարէին, կամ իրենց ընկերներին խանգարէին: Այժմ այլևս ոչ որ ոչինչ չէ մոռանում տանը, այլ ամեն ինչ իր ժամանակին ստանում է, որով թէ գործն է յառաջ գնում, թէ չարութիւնները վերանում և թէ մաքրութեան վարժում: Իսկ տարուայ վերջն էլ բոլորն ստանում են իրենց

տարեկան աշխատանքները, մաքուր պահած, մի բան, որ իրենց տանն անկարելի էր:

Ուսուցչական խումբը մանկավարժական տեսակէտից անյարմար է գտել թեր գծերով կամ քառակուսի գծերով տետրեր տալ աշակերտներին՝ զրելու կամ գծազրելու համար, համարելով այն վնասակար և մանուկների ազատութիւնը կաշկանդող:

Ամբողջ տարին դասական պիտոյքներ ստանալու համար Մանկ. Խորհրդի որոշմամբ բերել են՝ Ա. բաժնի աշակերտները 60-ական կոպէկ, Բ. բաժնեցիք 70-ական, Գ.-եցիք 80-ական, Ա. դասարանցիք 90-ական, Բ. և Գ. դասարանցիք մի մի ըուրլի: Ծայրայեղ չբաւորներին և ձրիններին դուրս ձգելով՝ մօտ 187 աշակերտներից ստացւել է ընդամէնը 154 ըուրլի 40 կոպէկ: Իսկ մնացած աշակերտների համար զբամ վճարել է Հոգաբարձութիւնը: 87 հոգի ստացել են դասական մանր պիտոյքներ, իսկ 38 հոգի նաև զրքեր:

Ա Ղ Ա Կ Ե Ր Տ Ա Կ Ա Ն Խ Ա Ղ Ե Ր.

Լաւ գնահատելով Ֆիզիքական դաստիարակութեան՝ այսինքն՝ մարմնամարզութեան, մանկական խաղերի և առողջապահական կանոնների պահպանման կարևորութիւնը դպրոցում, Մանկ. Խորհուրդն առանձին ուշադրութեան առարկայ է դարձրել այդ և մի առանձին Մասնաժողովի ձեռքով ընտրել ու հաւանութիւն է տուել մեր բակի տարածութեանը յարմար մի շարք ընտիր և լաւ խաղերի, որոնք պէտք է փոխարինէին տեղական չափազանց կոպիտ, տգեղ և շատ անգամ վնասակար խաղերը: Չմեռը, խիստ ու երկար լինելով, արգելք է լինում դժբաղդաբար բացօդեայ խաղերին: Չատ լաւ կըլինէր այս զէպրում դպրոցի միջանցքում, բանի որ մենք ձմեռուայ համար ծածկուած առանձին խաղասրահ չունինք, այսպէս կոչուած՝ Զվէդական մարմնամարզութիւն անել տալ աշակերտ-

ներին, բայց դպրոցի փոքրութիւնը, աշակերտների շատութիւնը, յատակի և կօշիկների անմաքրութիւնը միանգամայն անհնարին են դարձնում այդ: Լաւ կըլինէր, եթէ դպրոցն ունենար զուգափայտեր և այլ մարմնամարդական գործիքներ: Բայց այդ էլ չենք կարողանում ունենալ, մէկ կողմից շնորհիւ դպրոցի սուղ միջոցների, միւս կողմից և որ ամենից գլխաւորն է, մեր դպրոցն առանձնացած չէ: Փողոցից շարունակ բազմաթիւ մարդիկ են ներս ու դուրս անում, արտաքնոց գնալու համար: Զուգափայտեր եղած դէպքում՝ նորա էլ անշուշտ իրենց յատուկ յանդուգն բնաւորութեամբ պէտք է խառնուէին աշակերտների խաղերին, որ ամենին ցանկալի չէ. և գուցէ նոյնիսկ փայտերը կամ պարաննէշը կտրտէին ու տանէին: Տեղացիներին յատուկ է այդ ակերող գիծը: Օրինակներ շատ կան:

Դպրոցը փողոցից չեզոքացնելու համար Մանկ. Խորհրդի խնդրանօք դպրոցիս Հոգաբարձութիւնը թէ՛ եկեղեցու պարտիզի և թէ՛ փողոցի առաջից բարձր պարիսպ բաշեց, որով մի կողմից աշակերտների ելքն և միւս կողմից զբսեցիները մուտքն էր արգելուում և անմիտ հետաքրքրութեամբ լցուած ոչ ցանկալի հայեացքների առաջը՝ դէպի դպրոցի բակը՝ փակուում: Բացի զբանից ամբողջ դասերի ընթացքում զբսի դարպասը փակուում էր: Բայց գլխաւոր չարիքը դեռ մնում է: Դպրոցի օդը մաքրելու, զբսի փոշուց և աղմկից և բարոյական գայթակղեցուցիչ տեսարաններից ազատելու համար հարկաւոր է մի հիմնական բարեփոխութիւն, այսինքն՝ կամ դպրոցը բոլորովին չեզոքացնել, կամ և որ աւելի լաւ է, տեղափոխել: Բայց մինչև այդ երջանիկ օրը կարելի է և անհրաժեշտ է գոնէ զբսի խանութպանների համար մի ուրիշ արտաքնոց շինել և նոցա այդ նպատակով դպրոց մտնելն ընդմիջտ արգելել: Ո՛րքան վատ և անբարոյակաճացուցիչ կերպով է ազգում աշակերտների վերայ, երբ նորա կարգի են կանգնած, կամ թէկուզ հէնց աղօթելիս են լինում, երբ

յանկարծ արտաքնոցից դուրս է գալիս մի արհեստաւորի գոնհիկ աշակերտ, կամ հէնց ինքն արհեստաւորը, շորերը դեռ չկոճկած, կամ գօտին չկապած և գլխարկը գլխին՝ փարաւոնական ինքնավստահութեամբ անցնում է Փրոնտը: Ինքը չէ հասկանում, իսկ երբ նրան հասկացնում են, կոպիտ, կեղտոտ և անորակելի ասիական հայհոյանքն է լինում պատասխանը, որ հասնում է թէ ուսուցիչների և թէ՛ աշակերտների ականջին: Ո՛րքան է տուժում այսպիսի տեսարաններից դպրոցի կարգապահութիւնը: Եւ զարմանալին այն է, որ այդ երևոյթը տարիներ շարունակ կրկնուել է և դեռ կը շարունակուէ կրկնուել, եթէ միջոցներ չմտածուեն, իսկ աշակերտութիւնն էլ անպայման կը տուժէ:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԻՒՆ.

Կարգապահութիւնը դպրոցի կանոնաւոր կեանքի և խաղաղ ընթացքի ամենամեծ սիւներից մէկն է և բարեկրթութեան էական յատկանիշը: Մեր դպրոցի կարգապահութիւնը շնորհիւ մի բանի անբարեյաջող պայմանների, որոնց մասին վերը յիշել եմ, շատ թոյլ էր: Այդպէս թողնել անհնարին էր: Հարկաւոր էր զօրեղ կերպով մաքառել նորա դէմ: Մաքառման ամենամեծ զէնքերից մէկը բոլոր ուսուցիչների միանման վարմունքն էր: Հէնց առաջին օրերից Մանկ. Ժողովը որոշել է լինել՝ խիստ պահանջների մէջ, միանման՝ վարմունքների մէջ և յամառ ու հաստատուն որոշումների մէջ, մինչև որ անկարգութիւնը մէջտեղից վերանայ: Աշակերտներին շարունակ հսկող աչքերի տակ պահելու համար, որոշուել է, որ, բացի վերակացուներից, որոնք դասերի սկսուելուց կէս ժամ առաջ պէտք է դպրոց գային, ուսուցիչներն էլ 10 րոպէ առաջ գան և թէ՛ զասարան տանելիս կամ զասարանից դուրս հանելիս իրենց աշակերտներին զոյգ զոյգ կանգնեցնեն և այնպէս ներս ու դուրս տանեն: Եւ պէտք

է ասել, որ արդիւնքը շատ մեծ էր: Մինչդեռ տարուայ սկզբին 5—7 բոպէ էր հարկաւոր կարգ կանգնեցնելու համար, տարուայ վերջում 2 բոպէն էլ բաւական էր: Այսպէս պարտաւոր էին նաև ամէնքը հսկել աշակերտների ուշանալու, նոցա շորերի, գլխի, երեսի, ականջների, եղունգների և ձեռքերի մաքրութեան վերայ: Զուգուցելու զէպրում դաստիարակների միջոցով ծնողներին կանչել և նախագգուշացնել:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.

Աշակերտների բարքերի մեղմացման, նրանց մաքրութեան, երախտազիտութեան, ճշմարտասիրութեան, ընկերսիրութեան և նման առաքինութիւնների ու սովորութիւնների մէջ վարժեցնելու համար, բացի ամեն անգամ ծնողներին մասնաւորապէս կանչելուց, խորհրդակցելուց և զգուշացնելուց, Մանկ. Խորհուրդը կամեցել է ծնողների աւելի ընդարձակ շրջանում խորհրդակցել և նրանց աջակցութիւնն էլ խնդրել: Այդ նպատակով նա հրաւիրել է ծնողական ժողովներ, որտեղ մի կողմից պարզաբանուել են ընդհանուր սկզբունքներ և ցոյց տրուել, թէ որքան անհրաժեշտ է ծնողների և դպրոցի ձեռք ձեռքի տուած գնալն, և միւս կողմից՝ միջոցներ առաջարկուել զորա համար, որպէսզի դպրոցի շինածը ծնողները ոչ միայն չբանդին, այլ և աշխատեն ամեն կերպ՝ երեխաներին չեզոքացնել վատ շրջապատից և կեղտոտ միջավայրից:

Ծնողական ժողովներ ունեցել ենք ընդամէնը 8 հատ, որոնց մէջ խօսել են հետեւեալ ուսուցիչները հետեւալ նիւթերի մասին.

- ա) պ. Գ. Միքայէլեան, «Ընտանեկան սկզբնական դաստիարակութիւնը»:
- բ) պ. Խ. Սահակեան, «Ֆիզիքական դաստիարակութիւնը»:
- գ) Նոյնը, «Ուղեղի, նեարդների և կաշու դերերը»:

դ) Ն. Յովհաննիսեան «Նախադպրոցական քարոյական դաստիարակութիւնը»:

ե) Հայր Յակովբ Բահանայ Խաչվանքեան, «Ընտանիքի եւ դպրոցի սերտ յարաբերութիւններն եւ ծնողների պարտականութիւնները»:

զ) Նոյնը, «Գլոցական եւ ընտանեկան առողջապահութիւն, ծխախոտի եւ խմիչքների տուած վնասները»:

է) պ. Գեորգոս Այվազեան, «Բարոյական եւ ֆիզիքական դաստիարակութիւնն եւ նոցա փոխադարձ ազդեցութիւնը»:

ը) պ. Ռ. Աւետիսեան «Ծխելու եւ արքեցողութեան վնասներն ընդհանրապէս եւ դպրոցում մասնաւորապէս. նոցա դէմ կռուելու միջոցները»:

Բոլոր ժողովներում ներկայ են եղել ուսուցիչները. Գասախօսութիւններից յետոյ տեղի են ունեցել մտքերի փոխանակութիւններ, որոնց ընթացքում աւելի պարզուել և մատչելի են դարձել արժարժուած մտքերը: Որ ժողովականները հետաքրքրուած էին, դրան ապացոյց այն կարող է լինել, որ յիշեալ խնդիրներից շատերը ժողովականների խնդրանօք են ընտրուած: Մի բան նկատելի էր սակայն, որ այդ ժողովներին առհասարակ կանայք աւելի շատ էին գալիս: Թերևս սրանով մի անգամ ես արդարանում է այն միտքը, թէ մայրերն աւելի են հետաքրքրուում և աւելի զբաղում իրենց սրդիների կրթութեան գործով, քան հայրերը: Վերջիններս երևի գերադասում էին այդ ժամերին որևէ սրճարանում մի բաժակ գինի, օդի կամ զօլորշիացող սուրճ խմել և ականջները նարդու չըխկչխկոցով, սազանդարների կամ նոյնիսկ «տկի» եսկձայնով պարարել, քան թէ զպրոցում վարժապետի խօսքեր լսել:

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՄՆԵՐ.

Մանկավարժական Խորհուրդը շատ բարձր է գնահատել նաև դպրոցական հանդէսների կրթիչ գերը որտեղ աշակերտները խօսելու, արտասանելու երգելու, մի

խօսքով՝ հասարակութեան առաջ դուրս գալու վստահութիւն են ստանում, հանդէս են բերում իրենց ձիրքերն և զարգացնում ճաշակութեան գրանից, հանդէսները մեծ մասամբ կապում են որևէ տօնի հետ և դորա հետ միասին աշակերտներին բացատրում նորա նշանակութիւնը: Այս են մի պիւս է նոցա ընդհանուր զարգացման վերայ: Մեր դպրոցում մասնաւորապէս այդ լաւ է և այն տեսակէտից, որ պատրաստուելու ժամանակ աշակերտների մեծ մասը կապուած է մնում դպրոցի հետ և ուրեմն ուսուցիչների անմիջական հսկողութեան տակ մնում, փոխանակ փոփոխներում աննպատակ թափառելու:

Դպրոցական հանդէսներ ունեցել ենք մեր դպրոցի դահլիճում:

- ա) Ս. Թարգմանչաց տօնին:
- բ) Յունուարի 1ի-ն, աշակերտական տօնածառ,
- գ) Վարդանանց տօնին և
- դ) Ներկայ հաշուետուութեան հանդէսը:

Բացի դրանից մեր ուսուցչական խումբն ու աշակերտութիւնն եռանդուն մասնակցութիւն են ցոյց տուել տեղիս «Խրիմեան Աշակերտական ընկերութեան» բացման և Տիգրան Նազարեանի 25-ամեայ յօբելինական հանդէսներին: Ուրեմն այս տարի մենք ունեցել ենք ընդամենը 6 հանդէս: Ռուսաց յայտնի գրող Գօգօլի ծննդեան հարիւրամեակի առթիւ էլ դպրոցիս բարձր զասարանների աշակերտութեան առաջ ուսուցիչ պ. Ե. Գրիգորեանը բացատրել է նորա գրական գործունէութեան համաշխարհային նշանակութիւնը:

Այս հանդէսների առթիւ խօսել են ուսուցիչներ՝ պ. Գէորգ Միքայելեան մէկ անգամ, Հ. Յովհաննիսեան 4 անգամ, Արժ. Յակովբ բահանայ Խաչվանքեան նոյնպէս՝ 4 անգամ: Բոլոր այս հանդէսներին էլ հրաւիրուել են աշակերտների ծնողներն և բազմաքանակ հիւրեր: Մի առանձին շուր են տուել այս հանդէսներին պ. Գ. Բաբայեանի կազմած բզլական խումբն և նուազախումբը, որոնց մէջ մաս.

նակցութիւն են ունեցել բազարիս Կար ու ձևի և Արդութեան օրիորդաց դպրոցների աշակերտահիններից, Առևտրական դպրոցի աշակերտներից և բազարացի սիրողներից մի բանիսը, որոնց բոլորին էլ այստեղ հրապարակօրէն յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը:

Չատ ցանկալի կըլինէր, որ դպրոցն ունենար իւր սեպհական երաժշտական գործիքները, որոնցով դպրոցի աշակերտներից կազմուէր մի մշտական նուազախումբ: Այս կունենար իւր կրկնակի օգուտը. մէկ, որ աշակերտների երաժշտական ճաշակը կըզարգանար. մէկ էլ, որ դպրոցը կունենար իւր մշտական պատրաստի խումբը բոլոր դէպքերի համար և կ'ազատուէր պատահականութիւններից: Այս նպատակով եղած որ և է նուիրաբերութիւն շնորհակալութեամբ կընդունենք:

Ցաւելով պէտք է ասել, որ մանկական ներկայացումներ, որոնք նոյնպէս կամ գուցէ և աւելի մեծ չափով նըպաստում են մանուկների զարգացմանը, չենք ունեցել, չենք ունեցել, բարի կամք ունենալով հանդերձ: Սորա պատճառներն են. նախ՝ որ դպրոցը բեմ չունի և երկրորդ, որ դպրոցը միջոց չունի: Երբ պատրաստի բեմ չկայ, ամեն անգամ պէտք է բեմ կապել: Իսկ այդ մեծ ծախսերի և ժամավաճառութեան հետ է կապուած, մանաւանդ ու բեմի համար առանձին սենեակ էլ չունինք:

Մենք չունինք նոյնպէս մոզական լապտեր, որով հնարաւորութիւն ունենայինք գէթ երբեմն երեխաներին ցոյց տալ հետաքրքիր պատկերներ կամ տեսարաններ երկրներից, ծովից և այլն: Իսկ այս բոլորը որոնք զարգացուցիչ և անհրաժեշտ են աշակերտների մտքի համար:

ԱՀԱԿԵՐՏԱԿԱՆ ԶՅՕՍԱՆՔՆԵՐ.

Չատ մեծ նշանակութիւն ունին աշակերտների զարգացման համար նաև զբօսանքները, որոնց ժամանակ նորա իրենց աւելի մօտ են գտնում ուսուցչին և մտերմանում

նորա հետ: Նոցա հարցասիրութիւնը բնութեան անմիջական ազդեցութեան տակ զարթնում է և բնութեան մեծ գրքի էջերը բացում նոցա առաջ: Ամեն մի բար, ամեն մի բոյս, ամեն մի ալիք, ամեն մի թռչունի ձայն նոցա սրտի և մտքի հետ խօսում են: Ուսուցիչը պէտքէ առաջնորդէ նրանց այդ մեծ գիրքն ուղիղ կարգալ և ըմբռնել: Եթէ աշակերտների մէջ մեռած է հետաքրքրութիւնը, պէտք է զարթեցնել, որովհետև առանց հետաքրքրութեան՝ չկայ ձգտում, իսկ առանց ձգտման չկայ յառաջադիմութիւն: Նրանց պէտքէ խրախուսել հանքերի, բոյսերի և եւրիշ նիւթերի ժողովածուներ կազմել իրենց կամ դպրոցի համար, որով նպաստած կըլինեն նաև դպրոցի համար, եթէ ոչ հարուստ, գոնէ համեստ ժողովածուներ կազմելուն:

Աշակերտներին զբօսանքի տարել ենք 3 անգամ: Ցանկալի կըլինէր, ի հարկէ, աւելի շատ տանել: կարելի էր մինչև անգամ հայրենագիտութեան, բուսաբանութեան հանրաբանութեան և ուրիշ դասերի ամենամեծ մասը դուրսն անել, եթէ տեղական կլիման թոյլատրէր և բնութիւնը հարուստ լինէր: Չատ լաւ կըլինէր նրանց առաջնորդել նոյն իսկ աւելի հեռուները, տանել դէպի Անի, ցոյց տալ Չիրակի և շրջակայ գաւառների պատմական հնութիւններն ու աւերակները, որոնք կարող էին մեծ չափով ընդարձակել նոցա պատմական տեղեկութիւնների հորիզոնը: Բայց դորան հասնելու համար էլ ոչ մենք և ոչ աշակերտները չունինք կարևոր միջոցները:

Ը Ն Թ Ե Ր Ց Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն.

Վերոյիշեալ բոլոր պակասութիւնները թերևս հնար լինէր մի կերպ ընթերցանութեամբ լրացնել: Ընթերցանութեան ահագին կարևորութիւնն զգալով, Մանկ. Խորհուրդը որոշել է շաբաթ օրերը դասերը կէս-կէս ժամ անել և զրանից աւելացած ժամանակը, իբրև 6-րդ դաս, նուիրել

դասարանական ընթերցանութեան: Գաստիարակները կարգացել են իրենց դասարաններում աշակերտներին մատչելի գրքեր և միևնոյն ժամանակ սովորեցրել, թէ ինչպէս պէտք է կարգալ առհասարակ մի գիրք և օգտուել նրանից: Ոչ գաստիարակ ուսուցիչներին ումանք էլ ազատ ժամերին սիրով կարդացել են: Այս դասարանական ընթերցանութիւնից դուրս աշակերտներին, Ա. դասարանից սկսած, բաժանուել են գրքեր՝ նաև տանը կարդալու համար, իսկ տարուայ կիսից նաև Գ. բաժնի աշակերտներին:

Գրադարանից կարդալու համար գիրք են ստացել 119 աշակերտ՝ ընդամենը 1687 կտոր գիրք 1580-ը հայերէն, իսկ 107-ը ռուսերէն, հետևեալ կարգով.

			Սինազատ	Սմեաթիշ	Միջին.
Գ. բաժնից վերցրել են	20 աշակ.	200 գիրք	10	— 12	10. 0
Ա. դասարանից	» 40	» 578	» 11	— 18	10. 5
Բ.	» 40	» 603	» 11	— 21	14 45
Գ.	» 19	» 290	» 13	— 22	15. 2
Ընդամենը 119 աշակ, 1687 գիրք					13. —

Ընթերցանութեան պահանջը խիստ մեծ է մեր աշակերտների մէջ և անշուշտ երկու՝ կամ աւելի անգամ կարգացած կըլինէին, եթէ գրադարանը հարուստ լինէր:

Գրադարանն ունի 720 կտոր հայերէն գիրք, որից 1908—09 ուսումնական թուին նոր գնուել են 99 կտոր, իսկ չորսը նուէր: Մրանցից 409-ը աշակերտական են իսկ 311-ը ուսուցչական:

Ռուսերէն գրքերի թիւն է 456 կտոր, որից 1908—09 ուս. թուին նոր գնուել են 119 կտոր: Մրանցից 175 աշակերտական են, իսկ 281-ը ուսուցչական:

Գրադարանն ստացել է հետևեալ օրաթերթերն և ամսագրերը:

Հայերէն օրաթերթեր— «Մշակ», «Գործ».

» ամսագրեր— «Հասկեր», «Նոր-դպրոց», «Գեղար-
ւեստ, (միայն № 1):

Ռուսերէն Вѣстникъ воспитанія.

2' մոռանամ յիշել, որ Մանկ. Խորհուրդը, ի նկատի առնելով գրադարանի ազդատութիւնը, դիմել է Բագուի Հայոց «Կուլտուրական Միութեան» և «Հրատարակչական Ընկերութեան» և խնդրել, որ իրենց հրատարակութիւն-ներէից մէկ-մէկ օրինակ նուիրեն մեր գրադարանին, բայց քար լուծիւնն է եղել մեր պատասխանը: Սրանով մի անգամ էլ գալիս է շեշտուելու այն ճշմարտութիւնը, թէ աւելի լաւ է քաղցած մեռնել, բայց անկախ, քան աղեր-սող ձեռքը մեկնել դէպի դաժան մարդիկ:

ՓՈՐՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ.

Այս տարի թէև որոշուեցաւ փորձնական դասեր ունենալ, իբրև մի անհրաժեշտ միջոց ուսուցիչների համար՝ փոխա-դարձաբար միմիանց դասաւանդութիւնների թերի և լաւ կող-մերի հետ ծանօթանալու, ընկերաբար քննադատելու և քննադատուելու, հետևաբար և օգտուելու, և մի դաս էլ տըր-ւեց, բայց հէնց այս դասն եղաւ առաջինն ու վերջինը: Նոյն ժամին կրկնել ամեն շաբաթ փորձնական դասերն ոչ մի օգուտ չպէտք է բերէին, քանի որ վեցերորդ ժամին թէ ուսուցիչներն և թէ աշակերտները յոգնած են լինում: Պէտք էր մի ուրիշ ժամ գտնել: Զարաթուայ մէջ ոչ մի յարմար օր չունէինք, Ընթերցանութեան դասերը զոհել երկու շաբաթը մի անգամ, յօգուտ փորձնական դասի, չուզեցին ուսուցիչները: Զարաթուայ մէջ մի ուրիշ օր կէս կէս ժամ անել դասերը, նոյնպէս չուզեցին, անօգուտ համարելով բոլոր դասարանների դասերը կրճատել մի փորձնական դասի համար: Մանաւանդ որ սորանով շա-բաթուայ մէջ երկու օր պէտք էր դասերը կէս կէս ժամ անել: Առաջին դասից առաջ անել փորձն. դասը, նոյնպէս

տեխնիքական անյարմարութիւնների հետ էր կապուած: Ամենից յարմար օրեր մնում էին ուրեմն տօն օրերը, ոչ Կիրակէ: Բայց այդ էլ չուզեցին ուսուցիչները, տօնը հանգստութեան օր համարելով: Ուստի որոշուեցաւ ամենեկին չանել փորձնական դաս և պ. պ. ուսուցիչներին խնդրուեց՝ գոնէ ազատ ժամերին մտնել և ներկայ լինել իրենց ընկերների դասերին:

ՅՈՒՆԱՋԱԳԻՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆ.

Այս տարուայ Մանկավարժական Խորհուրդն էլ վե-րացրել է նախկին թուանշանների սիստեմն և բաւակա-նացել առայժմ միայն լաւ, բաւարար եւ թոյլ եռաստի-ճան արտայայտութիւններով: Բոլոր երկամսեակներին առանձին վկայականներով յայտնուել է ծնողներին իրենց զաւակների ո՞ր առարկայից թոյլ լինելու մասին և նոցա լուրջ ուշադրութիւնը հրաւիրուել:

Մանկ. Խորհուրդը դէմ է եղել նաև քննութիւններին: Դասարանից դասարան փոխադրութիւնները կատարուել են տարեկան յառաջադիմութիւնների հիման վերայ: Իսկ վերջին՝ աւարտական Գ. դասարանում, գիջելով միայն Հո-գաբարձութեան առաջադրութեանը, քննութիւն է նշա-նակել:

Փոխադրութիւնների նկատմամբ այս տարի Մանկ. Խորհուրդը փոքր ինչ խիստ է վերաբերուել, դասարան-ներում հնարաւոր եղածին չափ միանամանութիւն մտցնե-լու համար: Ընտրել նախկին տարիների զիջող վերաբեր-մունքի և այն հանգամանքի, որ տարբեր դպրոցներից տարբեր պաշարով տղաներ էին եկել մեր դպրոցը, դա-սարաններում յառաջ էր եկել ծայրայեղ անհաւասարու-թիւն թէ՛ հասակի և թէ՛ մանաւանդ պաշարի կողմից: Իսկ այդպիսի անհաւասար ոյժերի հաւասար գնահատու-մից յառաջ էր եկել անպայման ծուլութիւն և անտար-բերութիւն նաև լաւերի մէջ և աւելի ամբապնդուել աշա-

կերտների ուղեգում հայ ժողովրդական առածը, թէ «Հաստ ու բարակ մէկ զին է...», էլ ինչո՞ւ աշխատենք: Լաւերն այդպէս էին մտածում, իսկ Յոյլերը, շարժուելու ոչ մի նշան ցոյց չ'տալով, դպրոցի վերայ նայում էին ո՛չ իբրև լուրջ զբաղմունքի նուիրուհու, այլ իբրև մի ժամանցի տեղի վերայ, որով և դպրոցը դառնում էր մի անկեկանոց:

Այս բոլոր հանգամանքների հետ միասին Մանկ. Խորհուրդը, ի նկատի առնելով նաև այն հանգամանքը, թէ արդեօք որևէ աշակերտ ունի բաւական զարգացումն յաջորդ դասարանում շարունակելու, կատարել է փոխադրութիւնները, որոնք աշակերտութեան կրած տարեկան բոլոր փոփոխութիւնների հետ միասին տուել են հետեւեալ պատկերը.

Գասարաններ.		Աշակերտների թիւը տարուայ սկզբում.	Յունուարին ընդունւածներ	Ընդհանուր թիւնը.	Տարուայ ընթացքում կամաւոր հեռացածներ	Վարքի համար արձակւածներ.	Տարուայ վերջը մնացածներ.	Փոխադրուածներ.	Գասարաններում մնացածներ.	Գ. տարին մնալու համար արձակուածներ.	Ո՛ր տոկոսն է փոխադրուել.
Բաժանմունք	Ա. հ.	41	4	45	5	—	40	33	6	1	80%
	Ա. գ.	41	2	43	7	—	36	24	12	—	66%
	Բ.	47	2	49	2	1	46	29	14	3	63%
	Գ.	54	2	56	14	—	42	21	13	8	50%
Գասարաններ.	Ա.	50	2	52	13	—	39	20	14	5	51%
	Բ.	45	—	45	8	1	36	12*6	16	2	50%
	Գ.	22	—	22	4	—	18	15	3	—	78%
Ընդամէնը.	300	12	312	53	2	257	160	78	19	64%	

*)Վերաբնակի

Ուրեմն 312 աշակ. տարուայ վերջը մնում են զըպըրոցում միայն 257 հոգի, որոնցից 160 հոգի կամ 64%-ը փոխադրուում են, 78 հոգի կամ 30%-ը մնում, իսկ 19 հոգի կամ 6%-ը երրորդ տարին նոյն դասարանում մնալու համար, արձակուում:

Գ. դասարանում տարուայ վերջը մնացած 18 աշակերտներից դպրոցն աւարտուում են 15 հոգի, որոնք են.

- 1) Աբրահամեան Յարութիւն, Աղէքսանդրապօլցի.
- 2) Ալանական Գրիգոր, »
- 3) Անանեան Մկրտիչ, »
- 4) Առաքելեան Առաքել, »
- 5) Աւագեան Աւետիք, »
- 6) Կոստանեան Յարութիւն, »
- 7) Միխասեան Վաղարշակ, »
- 8) Նալդուանեան Արտաշէս, »
- 9) Զահրագեան Տիգրան, Խլի Ղարաբիլիսեցի.
- 10) Զանոյեան Հրաչեայ, Աղէքսանդրապօլցի.
- 11) Սահակեան Կարապետ, »
- 12) Սահակեան Սահակ, »
- 13) Սարգսեան Վահան, »
- 14) Սիմայեան Մկրտիչ, »
- 15) Տէր-Մկրտչեան Աշոտ, Խլի Ղարաբիլիսեցի.

Միւս ուսումնական տարուայ սկզբում ուրեմն՝ նախ քան նոր աշակերտների ընդունելութիւնը՝ մեր դպրոցը կունենայ 223 աշակերտ, որոնք բաժանուած կըլինին դասարանների վերայ հետեւեալ կերպով.

Բաժանմունքներ.				Գասարաններ.		
Ա.հ.	Ա.գ.	Բ.	Գ.	Ա.	Բ.	Գ.
6	12	71	42	35	36	21

Եթէ երկրորդ բաժնի բոլոր աշակերտները՝ 71 հոգին էլ գան, ինչ կասկած, որ պէտք է գուզընթաց բաց անել, բանի որ այդբան աշակերտներ այդ բաժնում, նոր ընդունուածներէ հետ միասին, կարող են երկու նորմալ դասարաններ կազմել:

Աշակերտներին հասցրած նիւթական օժանդակութիւնը.

2^րնայելով, որ մեր աշակերտների ահագին մեծամասնութիւնն աղքատ է (123 հոգի ձրիավարժ) այնուամենայնիւ դպրոցիս հոգաբարձութիւնն այս տարի հնարաւորութիւն չէ ունեցել, բարի կամք ունենալով հանդերձ, իւր ամուր սեղմուած գրպանները լայն բաց անել ահագին կարիքի առաջ: Ընդամէնը 87 հոգի ստացել են տետրակներ և ուրիշ դասական պիտոյքներ, իսկ 38 հոգի նաև դասագրքեր: Բացի դրանից նոր տարուայ տօնածառի համար նուիրարբերել է 40 ռ. չափ մի գումար: Ուսուցչական խումբը նոյնպէս առանձնապէս ոչինչ չէ ձեռնարկել այդ ուղղութեամբ, ոչ թէ ցանկութիւն չունենալով, այլ որպէսզի տեղիս՝ նոյն նպատակով կազմուած «Խրիմեան Աշակերտախնամ ընկերութեան» գործունէութեան սահմանները չ'ընկալուէ:

Զարմանալի է սակայն այն երևոյթը, որ մեզանում ծխական դպրոցներն, իբրև ուսման վայրեր արհամարհուելուց բացի, գուտ մարդասիրական տեսակէտից էլ բարձր թողի են արուած տեղիս հարուստների կողմից: Ուրիշ բազմաթիւ տեսնում էք, որ հարուստները մեծ թուով որդեգիրներ են պահում, տօն օրերին գրքեր, շորեր, խաղալիքներ և զրամական օգնութիւն են հասցնում չըբաւոր աշակերտներին: Այստեղ բոլորովին հակառակն ենք տեսնում: Արդեօք օղի սառնութիւնն է ազդել և սըրտերի վերայ...: Մեր ամբողջ դպրոցում ընդամէնը չորս որդեգիրներ կան, որոնք են. 1) Ալանակեան Գրիգոր, Գ. դասարանի աշակերտ, մանր առևտրականների որդեգիր,

2) Նոհրատեան Արտաշէս, Գ. դասարանի աշակերտ, պ. Յովհաննէս Կարճիկեանի որդեգիր և 3) Յովհաննիսեան Մկրտիչ, Բ. բաժնի աշակերտ և որդեգիր՝ պ. Վասիլապուհ Ղարաղույումչեանի, իսկ չորրորդը՝ Մկրտչեան Յովհաննէս, որին որդեգրել էր պ. Բաղդասար Ղութուզեանը, բայց այս տարի դժբաղդաբար չէ բարեհաճել իւր բարոյական խոստումը կատարել, չ'նայելով, որ դպրոցիս հոգաբարձութիւնը № 22 թղթով ստիպուած է եղել նրան այդ պաշտօնապէս յիշեցնելու: Ի՞նչ օգնութիւն է այս՝ ծով կարիքի առաջ: Ի՞նչ կըլինէր մեր աշակերտների դրութիւնը, եթէ յիշեալ «Խրիմեան...» բարենպատակ ընկերութիւնն օգնութեան ձեռք չ'մեկնէր ու 37 կիսամերկ երեխանէր չ'խլէր սառնամանիքների ճիրաններից:

Բոլոր այս բարերարներին ևս յայտնում ենք հրապարակօրէն մեր խորին շնորհակալութիւնը:

Աշակերտներին հասցրած ըժշկական օգնութիւնը.

Սրտի գոհունակութեամբ պէտք է արձանագրենք, որ այս տարի մեր դպրոցում սուր բնաւորութեամբ հիւանդութիւններ, համաճարակ ախտեր և մահուան դէպք տեղի չեն ունեցել, այլ միայն թեթև ու անցողակի հիւանդութիւններ, որոնք մեծ մասամբ հետեանք են սննդի, տաքութեան, մաքրութեան և մաքուր օդի բացակայութեան: Աչքի են ընկել մանաւանդ ստամոքսի, կոկորդի և աչքի հիւանդութիւնները, որոնք և անցել են անվտանգ: Գըպրոցը, նիւթականի սղութեան պատճառով, չունի սեպհական բժիշկ, որ, գոնէ երկու ամիսը մէկ անգամ, աշակերտներին ընդհանուր բնուութեան ենթարկէր: Բայց դպրոցում ամեն կերպ հոգ է տարուել մաքրութեան վերայ և հիւանդութեան դէպքը նկատուելուն պէս՝ հիւանդն իսկոյն բազարային հիւանդանոց է ուղարկուել, ուր և ձրիապէս բժշկուել է: Այս նպատակով Քաղաքային Վարչութիւնը մեր տրամադրութեան տակ էր գրել կտրո-

նատետրերը: Այդպիսի կտրոններ ստացել են 120 աշակերտ, որոնք և օգտուել են 360 անգամ: Հիւանդութեանց այս բանակը համեմատաբար մի այսպիսի բազմամարդ, բայց աղքատ դպրոցի համար բիշ է: Բացի դրանից բըժիշկ պ. Վ. Արշակունին էլ մի քանի աշակերտների ձրի բժշկական օգնութիւն է հասցրել: Թէ՛ բաղաբային վարչութեան և թէ՛ բժիշկ պ. Արշակունուն էլ յայտնում ենք հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը:

Հասարակութեան վերաբերմունքը դէպի դպրոցը.

Ահա մեր դպրոցի ընդհանուր նկարագիրը, որ զրի յարգելի հանդիսականներիդ դատաստանի առաջ, որպէսզի կարող լինիր աւելի արդար դատել և շատ խստապահանջ չ'լինել այնտեղ, որտեղ պարտքի գիտակցութիւնը չէ բացակայում: Չենք կարող այստեղ մատնացոյց չանել և այն բանի վերայ, որ մեր ծնողները զժգոհում են, երբ իրենց որդիներն աւարտելով մեր դպրոցը, կեանքի համար կատարելապէս պատրաստ չեն լինում, չեն կարողանում չաղ ոռճիկներ ստանալ, գուցէ և բժըշկութիւն կամ փաստաբանութիւն անել և ծնողներին մի անգամից ապահովել: Նորա մոռանում են սակայն, որ այդ անտեղի պահանջներով և խօսակցութիւններով, շատ անգամ հէնց աշակերտների մօտ, նոցա սիրտն էլ կոտրում են և սովորելու հետաքրքրութիւնը, խանդն ու եռանդը մարում: Նորա մոռանում են, որ մեր դպրոցն ամենից առաջ հայկական և ապա տարրական դպրոց է, որի նպատակն է միայն և միայն գրագիտութիւն ու տարրական գիտելիքներ աւանդել և ո՛չ մասնագէտներ պատրաստել: Այդ նպատակին հասնում է մեր դպրոցն իւր ծրագրի սահմաններում: Ով աւելին է պահանջում, թող չ'ուզարկէ այնտեղ իւր գաւակներին:

Ի հարկէ շատ ցանկալի կըլինէր, որ մեր դպրոցին կից հիմնուէր և մի արհեստագիտական բաժին, բայց այդ

այնպիսի դժուարութիւնների հետ է կապուած, որ աւելի լաւ է առ այժմ ձեռք բաշել և սիրել ու բաւականանալ մեր դպրոցով:

Միւս կողմից անկասկած է, որ հասունացել է վարուցուայ այն միտքը, թէ Աղէքսանդրապօլի նման մի բազմաճայ քաղաքի և դաւառի համար անհրաժեշտ է ունենալ մի միջնակարգ դպրոց, միանգամայն հաւասար մեր թեմական դպրանոցներին: Ինձ թւում է, թէ ժողովրդի մէջ երեւցող անօրոշ ու խուլ տրտունջներն էլ այդտեղ են յանգում: Նորա կամենում են, որ իրենց գաւակներն այս դպրոցն աւարտելով, գոնէ տեղական ուսուցիչներ լինելու իրաւունքն ստանան: Միանգամայն արդար պահանջ, բայց ո՞վ պէտք է դորան նպաստէ, եթէ ոչ ինքը, ժողովուրդը:

Այս ցանկութիւնն ունեցել են և ունին դպրոցիս թէ՛ հոգաբարձական և թէ՛ մանկավարժական մարմինները, բայց իրականացնել չեն կարողանում, շնորհիւ նիւթակականի սղութեան: Ինչպէս վերը յիշեցի, նոյն բիւջէով դպրոցը բարձրացնելու համար առաջարկութիւն է եղել դպրոցիս ստորին դասարանները փակել և դոցա փոխարէն բարձր դասարաններ բաց անել, առարկելով, որ ստորին դասարանների կարիքը քաղաքիս միւս տարրական դպրոցներն էլ կարող են լրացնել: Բայց այս առաջարկն էլ արձագանք չէ գտել: Իսկ մինչ այդ՝ կարելի է գոնէ և անհրաժեշտ է եղած դասարանների ծրագիրը հաւասարեցնել թեմական դպրանոցների ծրագրին, որպէսզի այստեղ աւարտողները կարողանան առանց դժուարութիւնների այնտեղ շարունակել իրենց ուսումը: Բայց հէնց այս համեստ ձգտմանն էլ բաւականութիւն տալու համար՝ շատ բան է պակասում մեզ: Բնական պատմութիւն ենք անցնում, չունինք հանրաբանութեան, բուսաբանութեան և կենդանաբանութիւն օժանդակիչ և անհրաժեշտ ժողովածուներ, մոզէլներ: Եղածներն էլ կեղտի և փոշու մէջ թաղուած, փչացած են, որովհետեւ պահարաններ չը-

կան. Պատմութիւն ենք անցնում, ոչ մի պատմական քարտէջ չունինք. աշխարհագրութիւն ենք անցնում, աշխարհագրական քարտէզները կարևոր կոմպլէքսը չունինք: Եղածներն էլ աղբատ Ղազարոսի վերարկուն են յիշեցնում իրենց անթիւ գունագեղ և բազմերանգ ծուէններով և կարկատաններով, որոնց վերայ ոչ մի տառ չէ նշմարուում և ուսուցիչն ստիպուած է ամեն բան մօտաւոր իսկութեամբ ցոյց տալ: Կովկասումն ենք ապրում, չունինք մեր հայրենիքի մի կանոնաւոր քարտէզ, ինչպէս և ամբողջ կայսրութեան համար: Գրագրարանը միանգամայն աղբատ է: Եթէ այս բոլորի վերայ աւելացնենք և այն, որ մեր աշակերտներից իւրաքանչիւրը միջին թուով գրեթէ երկու ամիս թոշակի և այլ դրամական հաշիւների համար՝ դասերից զրկուում է, պատկերը կատարեալ կլլինի:

Ահա այս ներքին և արտաքին պայմանները՝ ձեռք ձեռքի տուած՝ խանգարում են դպրոցի յառաջադիմութիւնը և այնտեղ պաշտօնավարող ուսուցչի գործը չափազանց դժուարացնում:

2^նայելով սրան, այնուամենայնիւ ներկայ դպրոցական տարին կարելի է արդիւնաւոր համարել, շնորհիւ ուսուցչական և հոգաբարձ. խմբերի միութեան և անդուլ ջանքերի: Աշակերտութեան վարը ու բարքը մեղմացել է, կարգապահութիւնը բարձրացել, այնպէս՝ որ տարուայ սկզբի և վերջի մէջ ահագին տարբերութիւն կայ: Յառաջադիմութիւնն էլ, չ^նայելով խիստ ընտրութեան, լաւ է: Ինչպէս տեսանք աշակերտների 64% -ը դասարանները փոխում են: Սակայն ժամանակաւոր յաջողութիւններով չըջլանալու և դպրոցի յառաջադիմութիւնն աւելի կանոնաւոր հիմունքների վերայ դնելու համար, անհրաժեշտ է արմատական բարեփոխութիւն: Ուստի մի անգամ ևս ընդհանուր գծերով կըթուեմ այն բոլոր թերութիւնները, որ ունի մեր դպրոցն և այն միջոցները, որ անհրաժեշտ են այդ շարիքների առաջն առնելու համար:

Աննպաստ պայմաններն են.

ա) Դպրոցի տեղը:

2^նայելով, որ մեր դպրոցի շինութիւնն ըստ ինքեան, իբրև մի ծխական դպրոց, վատ չէ, բայց, շնորհիւ իւր կենտրոնական գիւրքի, շատ է վնասուում: Դրսի աղմուկը, փոշին, գայթակղեցուցիչ տեսարանները շատ են խանգարում:

բ) Դպրոցի և խանութպանների գատ գատ արտաքնոյցներ չունենալը շատ մեծ չափով խանգարում և վատ են ազդում դպրոցի կարգապահութեան վերայ, ինչպէս վերը տեսանք:

գ) Թոշակների գանձումն և այլ դրամական հաշիւները մեր դպրոցի ամենացաւոտ կողմերից մէկն են, որոնց շնորհիւ աշակերտներն ահագին բանակութեամբ դասեր են կորցնում:

դ) Ուսուցիչներն և վերակացուները դասերով շատ են ծանրաբեռնուած:

ե) Հասարակութիւնն անտարբեր է դէպի դպրոցը. ծնողները շատ քիչ են հետաքրքրուում իրենց զաւակների վիճակով և չեն աշխատում արմատախիլ անել թէ՛ իրենց և թէ՛ նորանց միջից վատ հակումները: 2^նայելով, որ բոլոր ծնողական ժողովներում շեշտուած է, որ ամէնքն ազատ են դպրոց գալու, դասեր լսելու, դպրոցի վիճակով հետաքրքրուելու և այլն, բայց ծնողներից ոչ ոք չէ եկել: Ամբողջ տարուայ ընթացքում այցելուներ եկել են ընդամէնը 22 հոգի, որոնց մէջ կաթուղիկոսական պատգամաւորներ՝ Եգիպտոսի առաջնորդը, Դոկտոր, Տաղաւարեան, դպրոցիս հոգաբարձուներից 2-ը, պ. Գ. Մսերեան և պ. Մելիք Խզմալեան, բժշկապետ պ. Ա. Բաբայեան, պ. Խոյեցեան և մի բանի ուսուցչուհի-ուսուցիչներ, ընդամէնը՝ 28 անգամ:

զ) Թէ՛ դպրոցն և թէ՛ աշակերտութիւնն աղբատ են: Առաջինը չունի հարուստ գրագրարան, դասերին օժան-

դակող պարագաներ՝ քարտէզներ, ժողովածուններ, մողէլներ, ինչպէս և բեմ, խաղալու գործիքներ, դուզափայտեր և այլն, իսկ վերջինը չունի շոր, սնունդ և չափազանց գուեհիկ ու անկիրթ է:

Սորանց առաջն առնելու միջոցներն են.

ա) Եթէ դպրոցի տեղափոխելն անհնար է, գոնէ դըրսից պէտք է բոլորովին չեզոքացնել: բ) Արտաբնոցը գատել:

գ) Թոշակները, եթէ հնարաւոր չէ բոլորովին ձրի առնել, գոնէ տարուայ սկզբից, նախքան դասերի սկսուելը, պահանջել:

դ) Ուսուցիչներին բիչ դասեր տալ, նոյն գոծկով, այսինքն՝ դասադինը բարձրացնել, իսկ վերակացուններին կամ ամենևին դասեր չ'տալ, կամ 10 դասից ոչ աւելի:

ե) Ծնողները պարտաւոր են լուրջ և հետևողական կերպով հետևել իրենց երեխաների դպրոցական կեանքին, նոցա յաճախելու ժամերի կանոնաւորութեան և մաքրութեան վերայ: Նորա պէտք է աշխատեն անպայման իրագործել դպրոցական բոլոր կարգադրութիւններն և դպրոցի հետ աւելի լաւ ծանօթանալու համար, դպրոց յաճախել, դասեր լսել և այլն:

զ) Հարուստ քաղաքացիք պէտք է աւելի բարեացակամ լինին զէպի դպրոցը. պահեն որդեգիրներ, նուիրեն զրբեր, քարտէզներ, մողէլներ, ժողովածուններ, երաժշտական գործիքներ և այլն:

Յուսալով, որ մեր այս հաշուետուութիւնը որոշ չափով նպաստած կըլինի յարգելի հանդիսականներիդ մի հայեացք ձգել մեր դպրոցի ցաւերի վերայ և արձագանք կըզտնէ ձեր բարի սրտերում, խօսքս ուղղում եմ այս տարուայ ընթացաւարտներին:

ՍԻՐԵԼԻ ԱԶՍԿԵՐՏՆԵՐ ,

Ամենից առաջ սեղմում եմ ձեր ձեռքն և շնորհաւորում ձեր այս անդրանիկ փորձիկ յաղթանակը: Այո՛, իւրաքանչիւր մի յաղթանակ, լինի նա մեծ, թէ փոքր, իւր շրջանում յաղթանակ է և յաղթանակների վերելքի մի աստիճանը: Գեանքն այդպիսի փորձիկ յաղթանակների մի սանդուղք է, որ ամէն մէկը մեզնից պէտք է բարձրանայ, այն տարբերութեամբ միայն, որ մէկն աւելի է բարձրանում, իսկ միւսը սակաւ: Այդպէս է կեանքը: Ով ընդունակութիւն և անվերջ հետաքրքրութիւն ունի, նա անվերջ կըբարձրանայ, որովհետև ով հետաքրքրութիւն ունի, նա ունի և ձգտումն, իսկ որտեղ ձգտումն կայ, այնտեղ կայ և յառաջադիմութիւն: Գեանքն առանց յառաջադիմութեան կեանք չէ:

Երկար տարիներ անց կացրիք դուք այստեղ, այս համեստ յարկի տակ, երբեմն լաւ և երբեմն վատ: Գեանքի մէջ սակայն ըրպէնք են լինում, երբ վատը մոռացում և լաւն է միայն յիշում: Այդպիսի խորհրդաւոր ըրպէնքերն են պատկանում հրաժեշտի ըրպէնքերը: Հրաժեշտի ըրպէնք կարող են լինել՝ և՛ ընկերների, և՛ ամուսինների, և՛ սիրող սրտերի, և բրոջ ու եղբոր մէջ: Նորա ամէնքն էլ յուզիչ և՛ սրտառուչ են: Բայց ներկայ ըրպէն ձեզ համար, սիրելի աշակերտներ, մօր և զաւակի հրաժեշտն է յիշեցնում, երբ արտասուելախառն աչքերով երախտագէտ որդին բաժանման վերջին հրաժեշտն է տալիս իւր սիրելի մօրն ու երգում երբէք չ'մոռանալ նորա մայրական զգուանքները, սէրն ու երախտիքը:

Գուր այսօր բաժանում էք ընդմիջտ ձեր մօրից, ձեզ բարոյապէս սնուցանող մօրից, և ով զիտէ, Ի՞նչ է սպասում ձեզ ապագայում: Սակայն երդուեցէք այստեղ, ամէնքիս առաջ, որ կեանքի բոլոր փոթորիկներում և արհաւիրքներում չէք մոռանալ ձեր մօր սրբազան աւանդը, հաւիրքներում չէք մոռանալ ձեր մօր սրբազան աւանդը, մօր, որ ձեզ հոգեպէս դիեցրեց, պըռմէթխեան կըակը

վառեց ձեր սրտում, զարթեցրեց ձեր հետաքրքրութիւնը, որ ձգտման առաջին պայմանն է, իսկ ձգտումը՝ յառաջագիմութեան և կեանքի յաղթանակների գրաւականը:

Դուք ձեր առաջին յաղթանակը տարաք, բայց սա դեռ սկիզբն է և մարտի հրաւէրը դեռ որոտում է. քաջերին նոր յաղթանակների փառքն է սպասում. Յառաջ, եթէ քաջ էք:

Երթաք բարեան...

Գարգաց տարեկան հաշուետուութեան հանդիսին՝

Աւագ ուսուցիչ՝ Հ. Յովհաննիսեան.

Աղէքսանդրապոլ.
1909, Յունիսի 7-ին:

Մ Ա Ս Ն Բ.

Աղէքսանդրապոլի ս. Փրկչի տղայոց դպրոցի ուսումնական տարուայ տնտեսական տեղեկագիրը.

1907 — 1908 ուսումնական տարին մօտ էր վերջանալու, մինչ այդ ժամանակ հոգաբարձութեան պաշտօն վարում էին պ. պ. բժիշկ Արամ Տէր-Չմաւոնեանց, Մելիքսեդեկ Խղմալեանց, Արժ. Յակովբ քահանայ Խաչվանքեանց, պ. Աղէքսանդր Լիսիկեանց և երէցփոխան պ. Մկրտիչ Մկրտչեանց. բայց երբ արձակուրդներն սկսուեցին և սկսուելու էր 1908 — 1909 ուսումնական տարին, հրաժարուեցին պ. Ա. Լիսիկեանց Մայիսի 21-ին, Արժ. Յակովբ քահանայ Խաչվանքեանց Օգոստոսի 18-ին: Նոցա տեղ հրաւիրուեցին պ. Գէորգ Մսերեանց Մայիսի 28-ին, պ. Արշակ Խաչատրեանց, Օգոստոսի 28-ին: Այսպիսով հոգաբարձական կազմը լրացաւ. իսկ երբ ուսումնական տարին սկսուեց և բաւականին ժամանակ անցաւ, հրաժարուեց և պ. բժիշկ Ա. Տէր-Չմաւոնեանց, նորա տեղ հրաւիրուեց Յունուարի 9-ին 1909 թ. պ. Արշակ Բիշարեանց:

Հոգաբարձութիւնը իւրաքանչիւր շաբաթ ունեցիլ է հերթական ժողովներ և բացի զրանից եղել են շատ անգամ և արտակարգ ժողովներ և այդ ժողովների մէջ՝ նա աշխատել է հնար գտնել դպրոցի արդիւնքները աւելացնելու, դպրոցի անհրաժեշտ կարիքները հոգալու և որ զլիսաւորն է, նա մտածել է դպրոցի կրթականը բարձրացնել: Մայիս ամսուց, երբ ուսումնական տարին վերջանալու էր, նա իւր ուշադրութիւնը դարձրել է աշակերտ-

ների կրթութեան վերայ և մտածել է բանալ Գ. դասա-
րան, և զորանով տալ միջնակարգ դպրոցի կրթութիւն
իւր սաներին, որոնք կարող լինէին ձեռք բերած ուսման
պաշարով թէ իրենց և թէ հասարակութեան պիտանի և
կարիքը հոգացող անդամներ լինել: Այս որոշումը դասա-
րանի բացման կայացրել է հոգաբարձութիւնը իւր 1908
թուի Մայիս ամսոյ 5-ի նիստում, և այդ իրականացնելու
համար դիմել է փոխ-թեմակալ առաջնորդին Երևանայ
Մայիսի 6-ին № 46 գրութեամբ այսպէս. «Ուսումնական
տարին բոլորում է, դպրոցը իր երեքամեայ գործունէու-
թեան ընթացքում դիտեց այն կարիքները, որ ժողովրդի
բարոյական և կրթական կեանքը ստեղծեց այս կարճ
ժամանակի ընթացքում: Գաւառն իւր տնտեսական կեան-
քի անկումով հնարաւորութիւն չունի իւր գաւաղների ու-
սուցման գործի շարունակութիւնը տանել օտար պայ-
մաններում: Ուստի նա փափագում է տեսնել իւր կեն-
դրոնում միջնակարգ վիճակի հասած մի դպրոց, որ մի-
ջոց կըտայ իր զըռանը կրթութեան բաւարար աստիճանի
հասցնել: Այս կարիքներին բաւարարութիւն կարող է տալ
Աղէքսանդրապոլի ս. Փրկչի տղայոց դպրոցը, որ նիւթա-
կան անհամեմատ նպաստաւոր պայմանների մէջ է գըտ-
նում. ուստի նորա հոգաբարձութիւնը, խոնարհարար
խնդրում է Ձերդ գերապատուութիւնից. հաղորդել իրեն,
թէ կարող է հոգաբարձութիւնս առաջիկայ ուսումնական
տարում բաց անել 7-րդ բաժանմունք Գ. դասարան,
միւսների բացումը թողնելով յաջորդ տարիներին: Հոգա-
բարձութիւնս լիայոյս է, որ այս խնդիրը Ձերդ գերա-
պատուութեան սրտին մօտ լինելով, կըշտապի օր առաջ
հրամանագրել մեզ, որ ըստ այնմ պայմանաւորութիւնը ար-
ձակուրդներից առաջ ուսուցիչների հետ և տնօրինները
6-7դ բաժանմունքի աշակերտների դրութիւնը:» Մայիս
ամսուայ 15-ին № 282 գրութեամբ հետեւեալ պատասխա-
նը ստացաւ Երևանի փոխ-թեմակալ առաջնորդ Յուսիկ
արքեպիսկոպոսից. «Ի պատասխան հոգաբարձութեանդ

ամսոյս 6-ին № 46 գրութեան, յայտնում եմ, որ ծխա-
կան դպրոցները վերաբացուելիս չէ ճշտուած, թէ բանի
դասարան պէտք է ունենան, և ի նկատի ունենալով.

«ա) Որ դպրոցների կառավարութեան հիմնական
կանոնը 1874 թուի օրէնքն է,

«բ) Որ այդ ժամանակ, ս. Փրկչի եկեղեցու դպրոցը,
որ վիճակային էր կոչուում, բացի նախապատրաստական-
ներից, ունէր չորս հիմնական դասարան, թոյլ եմ տալիս
բանալ 7-րդ բաժանմունք՝ կամ Գ. դասարան, մինչև նոր
կանոնագրութեան, հաստատուելը, որ խմբագրուում է և որով
վերջնականապէս կորոշուի հայ դպրոցների վիճակը:»

Այս գրութիւնը ստանալուց յետոյ անմիջապէս, յայտ-
նուեց ուսուցչական ժողովին, որ բանալու է հոգաբար-
ձութիւնը Գ. դասարան. ուստի աշակերտներին չպէտք
է տրուի դպրոցիս դասընթացն աւարտելու վկայագրեր.
պատուիրել սեպտեմբերի 1-ին զալ դպրոց: Այս լուրն
անչափ ուրախացրեց դպրոցիս Գ. դասարանի սաներին,
որոնք լի յուսով անհամբեր սպասում էին բացման օրին:

Հոգաբարձութեան այս մտադրութիւնն իրականու-
թիւն չստացաւ շնորհիւ մի շարք արտակարգ ծախսերի.

ա) նա շինել տուեց երկու խանութներ իւր սենեակ-
ներով և նկուղներով, որք արժեցան 2463 ռ. 95 կ.

բ) Դպրոցի և եկեղեցու պարիսպներն և դարպասը
նորոգել տուեց, որ արժեցաւ 206 ռ. 14 կ.

գ) Դպրոցիս՝ դիրեկցիայի ձեռքում եղած ժամանակ-
ւանից մնացած կալուածների գնահատական տուրքի ա-
պառիկները, որը հոգաբարձութիւնն ի նկատի չէր ունե-
ցել, վճարեց 676 ռ. 15 կ., որ կազմում է ապառիկների
մի բաւորը. իսկ մնացորդը պէտք է ծանրանայ դպրո-
ցիս յետագայ բիւզճէի վերայ: Կրպակներ շինելու ժամա-
նակ հոգաբարձութիւնը դրամի խիստ կարևորութիւն
զգալով և որպէսզի գործը կիսակատար չմնայ, նա դիմեց
պ. Եզոբ Բաղդասարեանցին և խնդրեց փոխարինաբար
600 ռուբլի պարոնը մեծաւ ուրախութեամբ տուեց այդ

գումարը, առանց տոկոսի, որը հոգաբարձութիւնս վերադարձրեց այս տարի, որի համար հրապարակու իւր շնորհակալութիւնն է յայտնում պ. Ե. Բաղդասարեանցին: Պէտք է ասել, որ դպրոցիս վերաբացուելու ժամանակ, դիրեկցիայից դպրոցական գոյքն ստանալու ժամանակ դրամական ոչ մի հաշիւ չէ ստացուած, որից երևար, թէ որքան դրամ է մնում և որքան պարտք կայ կալուածների գնահատական տուրքից. այդ պատճառաւ դպրոցիս հոգաբարձութիւնը դիմել է 1907 թ. Ապրիլի 4-ին №39 գրութեամբ, քաղաքային դպրոցի տեսչին — պ. Սուխովին, որ հոգաբարձութեան տայ դպրոցի նախկին դրամական հաշիւներն և յայտնէ կալուածների գնահատական տուրքերից ապառիկ մնացածի գումարը: Սորան պ. Սուխովը պատասխանում է 1907 թ. Յուլիսի 8-ին № 218 գրութեամբ. «Չկարողացայ հաշիւները կազմել և չեմ էլ կարող երաշխաւորել, թէ այդ ահազին գործը կարող կըլինի միայնակ ես վերջացնել. բանի սը դպրոցները միացած էին և ծախսն ու մուտքը կատարում էին ընդհանուր կերպով:

Սկսուեց 1908—1909 ուսումնական տարին. եկան Գ. դասարանի աշակերտները, որոնք յուսով էին, թէ բացուելու է Գ. դասարան, դառն էր նոցա վիճակը, երբ տեղեկացան, որ դպրոցի նիւթական սղութեան պատճառաւ անկարող է հոգաբարձութիւնը բանալ Գ. դասարան. ստացան վկայագրերը: Սկսուեց նոր աշակերտաց ընդունելութիւնն և աշակերտների թիւն եղաւ 312. սորանցից տարւայ ընթացքում թողին դպրոցը 55 հոգի. մնացին 257, որոնցից 123-ը ձրիավարժներ էին, իսկ 134-ը թոշակաւոր. ուրեմն դպրոցիս աշակերտների կէսը ձրիավարժներ էին: Այս 134 աշակերտներից թոշակ պէտք է ստացուէր 1340 ռ. բայց ստացուել է 1176 ռ. 50 կ. ուրեմն ապառիկ է մնում 163 ռ. 50 կ.: Անցեալ 1907—1908 ուսումնական տարուանից ապառիկ մնացած թոշակից, այս տարի ստացուել է 22 ռ. 50 կ., որով բոլոր թոշակի գումարն անում է 1199 ռուբլի:

Սոյն 1908—1909 ուսումնական տարում դպրոցը մուտք է ունեցել.	Ր.	Կ.
Ս. Փրկիչ եկեղեցու կրպակներից մինչև Մայիսի 1-ը ստացուել է.	8167	32
Աշակերտներից թոշակադրամ ստացուել է.	1199	—
Դպրոցիս ուսուցչաց կանխավճար տուած է, որն ամեն ամիս ուճիկներից գուրս է եկած.	265	—
Ընդամէնն մինչև Մայիսի մէկը մուտք է եղած.	9631	32
Ստացուելու կայ կրպակների վարձ.	1632	68
Աշակերտաց թոշակադրամներից ստանալիք.	163	50
Ամենն.	1796	18
Որը աւելացնելով ստացած գումարի վերայ, լինում է ընդհանուր մուտք.	11427	50
Ծախք եղած է մինչև Մայիս ամսուայ մէկը. Դպրոցի աւագ ուսուցչին, ուսուցիչներին և ծառայողներին.	4766	56
Ս. Փրկիչ եկեղեցու երեցփոխանին տուած է եկեղեցու սպասաւորներին ուճիկ.	342	„
Խանութները շինելու ծախք այս տարի տուած է.	860	26
Դպրոցի և եկեղեցու պարիսպներն և դարպասը շինելուն.	206	14
Վառելիքի թէ դպրոցի և թէ եկեղեցու համար տուած է:	215	50
պ. Եգոր Բողդասարեանցի պարտքը վճարած է.	600	„
Դպրոցիս ուսուցչաց կանխավճար տուած է.	265	„
Քաղաքային ինքնավարութեան կալուածների տուրք տուած է.	676	15
Չորս պատգամաւորների ճանապարհի ծախս երևան գնալու թեմական առաջնորդի ընտրութեան համար.	60	„
Դպրոցական ծախքեր, սեղանների նորոգութեանց, ապակու և այլն.	83	73
Գիւանական և մանկավարժական ժողովների ծախք.	46	07
Յայտարարութիւնների, մատեանների տպագրութեան և մատեանների կազմելու համար տուած է.	69	68
Դպրոցի գրադարանի համար գրքեր է գնուած.	56	50
Լրագրերի տուած է.	24	80
Նոր տարուն աշակերտական տօնածառի առթիւ.	37	28
Դպրոցի շքաւոր աշակերտներին դասական պիտուք արժողութեամբ.	95	13
Ընդամենը ծախսուած է	8404	80

Մնում է վճարելու մինչև սեպտեմբերի 1-ը աւագ- ուսուցչին ուսուցիչներին և բոլոր ծառայողներին.	2413	14
Գլրոցը մասնաւոր անձանց տալու է.	100	—
1907-1908 թուականից պարտք կայ վճարելու. ամենն.	988	7
	3501	51

Այս գումարը աւելացնելով մինչև մայիսի 1-ը արած ծախսի վրա. լինում է 11906 ռ. 31 կոպ. ընդհանուր մուտքն ու ծախսը համեմատե-
լով, դուրս է գալիս, որ եթէ ապառիկ ստանալիք մուտքերն ևս
ստացուեն լրիւ, տարուայ վերջը գլրոցը պարտք կ'ունենայ. 478 թ 81
կ. բացի բաղաբային ինքնավարութեան վճարելու կալուածների
գնահատական տուրքերի ապառիկները, որը պիտի լրացուի հետ-
գհետէ:

Այս համառօտ հաշիւը ներկայացնելով ձեզ, արգոյ
հասարակութեանդ, հոգաբարձութիւնս իւր պարտքն է հա-
մարում յայտնել, որ գլրոցիս թէ նախկին ու թէ ներկայ
հոգաբարձութեան հոգատարութեան առարկան եղել է նը-
մանապէս Ս. Փրկիչ եկեղեցու կրպակների ներկայ վիճա-
կը. փորձեցէք մտնել այդ կրպակներից մէկն ու մէկը և դուք
կը տեսնէք, որ այդ կրպակները այդ զրուլթեամբ չ'են կա-
րող երկար իրենց գոյութիւնը պահել. դոքա այնպիսի բայ-
բայուած դրուլթեան են, որ միջի կրպակապանն զգում է շատ
ծանր ու անտանելի դրուլթիւն. նոցանից շատերը մեծ ու-
րախութեամբ կրկին վարձ կըտան, եթէ այդ կրպակներն
իրենց խարխուլ դրուլթիւնից ազատուեն. կրպակները պա-
հանջում են հիմնական վերանորոգութիւն: Այդ մասին շատ
անգամ է մտածել հոգաբարձութիւնը, յատկապէս հրա-
ւիրել է բաղաբիս մասնագէտ անձանց մի քանիսին, որպէս
ի մի ընդհանուր նախահաշիւ կազմուի այդ շինութիւնները
վերանորոգելու: Նոցա հաշուով ամենասակաւը 25-40 հազար
րուբլի է հարկաւոր, որ հիմնաւորապէս կարելի լինի կանոնա-
ւոր վիճակի վերածել. բայց այդ հոգաբարձութիւնս իւր
ուժից բարձր համարելով, ստիպուած է եղել մի քանի

անգամ ծխական ժողով հրաւիրել, բայց տարաբախտաբար
ոչ մի անգամ ժողով չի կայացել ծխականների անտարբե-
րութեան պատճառով, որին ապացոյց մայիս ամսոյ 17-ի
ժողովը. որ 1000 ծխից աւելի ունեցող եկեղեցու անգամ-
ներից, ներկայ էին ժողովին միայն 29 ծխական:

Գարոնայք, հոգաբարձութիւնս հրաւիրում է Ձեր ու-
շաղրութիւնը վերջին կէտերի վերայ, պէտք է աշխատել
ժողովներին որքան կարելի է բազմաթիւ ծխականներ լի-
նին, պէտք է աշխատել գլրոցի կալուածներն իրենց ներ-
կայ վիճակից ազատել. լաւ պիտի իմանայ արգոյ հասա-
րակութիւնդ, որ եթէ այդ զրուլթեան թողնուին կալուած-
ները, վաղ թէ ուշ նորա պիտի բայբայուին և տպարդին
լինին և հասարակութեանդ միջնակարգ և չբաւոր դասա-
կարգի գաւալները պիտի զրկուին կըթուլթիւնից, որովհետև
գլրոցը ոչ մի եկամուտ չի ունենալ և կը դադարի գո-
յութիւն ունենալուց:

Անգամը հոգաբարձութեան՝

- Գէորգ Մսերեանց.
- Արշակ Բիշարեան.
- Մելիքսէթ Խզմալեան.

Երեցփոխան՝ Միսակ Բուխկեանց.

Քարտուղար՝ Ա. Արշակունի.



Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր.

Սխալ.	Ուղիղ.	ՏՈՂ.		ՏՈՂ.
		էջ.	Ներքևից.	Վերևից.
1. Թիւրիմացուլթիւր	Թիւրիմացալթիւն	3	5	—
2. Երկառել	Երկարել	9	13	—
3. Էր—	էր,	11	16	—
4. Կաղօր	Կարող	11	1	—
5. Անխնդիր	Անխտիր	13	—	2
6. Զբաղ,	Զբաղ.	15	9	—
7. Անգործների	Անգործների.	15	8	—
8. Չըստանձնեցի	Չ'ստանձնեցի	16	6	—
9. 16	14	17	—	3
10. Գասերի	Գասերի	20	—	8
11. Թիւր	Թիւր	20	—	8
12. 42	68	21	—	15
13. Ուսուցչական	Ուսուցչական	22	6	—
14. Դասլ,	Դաս,	32	1	—
15. Նուիրե	Նուիրել	32	1	—
16. Դռանը	Դռանը	48	—	18
17. Ի պատասխան	Ի պատասխանի	48	1	—

«Ազգային գրադարան»



NL0231533

50. 280